ՆԻՆՈ ԳՎԱՐԱՄԱՁԵ
ՆԻՆՈ ՄԻԾԻՇՎԻԼԻ

ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀԻ ՀԱՄԱՐ

Քաղաքացիական կրթության օժանդակ
ձեռնարկ X դասարանի համար

USAID FROM THE AMERICAN PEOPLE
PH international ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀԻ ՀԱՄԱՐ
Ուսուցչի գիրք
Քաղաքացիական կրթության օժանդակ ձեռնարկ X դասարանի համար, երկրորդ հրատարակություն:

Ձեռնարկի երկրորդ հրատարակությունը տպագրվել է ՍՊԸ «Սեզանում»: Երկրորդ հրատարակությունը ներկայացնում է ձեռնարկի առաջին հրատարակության փոքր-ինչ փոփոխված տարբերակը:

Հեղինակներ՝
Նինո Գվարամաձե
Նինո Միծիշվիլի

Աշխատանքային խմբի առաջնորդ՝
Նինո Բեսելիա

Առաջին հրատարակության վրա աշխատել են՝
Թարգմանիչ՝ **Զոյա Մխիթարյան**
Խմբագիր՝ **Գիսանե Հովսեփյան**
Ձևավորող՝ **Մարթա Թաբուկաշվիլի**
Էջադրող՝ **Մարիամ Ջիքիա**

©Project Harmony, Inc., 2015
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ձեռնարկի առաջին հրատարակությունը տպագրվել է ՍՊԸ «Գազեթի Սաքարթվելոս մացնեում»:

ISBN 978-9941-0-7502-5

Ձեռնարկը ստեղծվել է ամերիկացի ժողովրդի աջակցության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Ձեռնարկում տրված տեղեկությունների և նրանում արտահայտված կարծիքների համար պատասխանատու են հեղինակները, և դրանք չեն ներկայացնում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

2010-2014 թթ. PH International կազմակերպության կողմից, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ Վրաստանում իրականացավ քաղաքացիական կրթության և մանկավարժների վերապատրաստման ծրագիրը:

Ծրագրի նպատակն էր քաղաքացիական կրթության դպրոցական ծրագրի որակի բարելավումը և ժողովրդավարական հասարակության կառուցման գործընթացում երիտասարդների մասնակցության աջակցումը:

Այս նպատակի իրականացման համար ծրագրի շրջանակներում ստեղծվել է քաղաքացիական կրթության ուսուցման չորս օժանդակ ձեռնարկ, անցկացվել են մանկավարժների վարժանքներ, ստեղծվել են դպրոցական քաղաքացիական կրթության ակումբներ, աշակերտների, մանկավարժների և ծնողների քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման համար հատկացվել են փոքր դրամաշնորհներ, հիմնադրվել է քաղաքացիական կրթության մանկավարժների համաժողով, կազմակերպվել են քաղաքացիական կրթության ամառային ճամբարներ, ստեղծվել է քաղաքացիական կրթության և քաղաքացիական նախաձեռնությունների երկու վեբ-պորտալ՝ www.civics.ge և www.initiatives.ge, աշակերտների համար անցկացվել են սոցիալական մեդիայի վարժանքներ և հիմնադրվել են քաղաքացիական կրթության գրադարաններ:

Սույն ձեռնարկը մեկն է այն օժանդակ ձեռնարկների մատենաշարից, որոնք ստեղծվել են ծրագրի շրջանակներում: Ձեռնարկը շատ քիչ փոփոխություններով երկրորդ անգամ տպագրվել է 2015թ. քաղաքացիական կրթության «Ապագայի սերունդ» նոր ծրագրի շրջանակներում, որը կրկին իրականացվում է PH International կազմակերպության կողմից, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ:

Ձեռնարկը նախատեսած է մանկավարժների համար և ընդգրկում է շատ հետաքրքիր և օգտակար տեղեկություններ: Դասագրքի միջոցով մանկավարժները կկարողանան աջակցել աշակերտներին դասից ստացած գիտելիքն առօրյա կյանքում և գործունեության մեջ կիրառելուն, համախոհների և գործընկերների որոնման հարցում, որպեսզի աշակերտները ծրագրեն և իրագործեն հասարակության համար օգտակար նախագծեր: Լավ քաղաքացիության սկզբունքների գործնական կիրառությամբ աշակերտները կմասնակցեն Վրաստանի՝ որպես հզոր ժողովրդավարական պետության կառուցմանը և զարգացմանը:

Ապագա հաջողությունների ցանկությամբ՝
PH International, Վրաստան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն 5
Ինչպես օգտվենք գրքից 9

ԹԵՄԱ 1
Հիմախնդիրները հասարակության մեջ, վերաբերմունքը հիմախնդիրների նկատմամբ 16

Հավելված 1 29

ԹԵՄԱ 2
Համագործակցություն: Գործընկերների ընտրության սկզբունքները: Համագործակցության կանոնները: Բախումը համագործակցության ժամանակ 32

Հավելված 2 (1) 44
Հավելված 3 (2) 47
Հավելված 4 (3) 50
Հավելված 5 (4) 53

ԹԵՄԱ 3
Հասարակական գործունեություն: Հասարակական շահ: Հիմախնդիրները և դրանց վճռման ալգորիթմը 58

Հավելված 6 (5) 72
Հավելված 7 (6) 73
Հավելված 8 (7) 74
Հավելված 9 (8) 75
Հավելված 10 (9) 76
Հավելված 11 (10) 77
Հավելված 12 (11) 78
Հավելված 13 (12) 79
Հավելված 14 (13) 80
Հավելված 15 (14) 81
Հավելված 16 83
Հավելված 17 84
Հավելված 18 85
Այբբենական բառարան 87
Օգտակար ռեսուրսներ 89
Օգտագործված գրականություն և լուսանկարներ 90

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալ գիրքը ուսուցչի օժանդակ ձեռնարկ է, որը «Համագործակցություն հասարակական շահի համար» ուսումնա-մեթոդական հավաքածուի բաղադրիչ մասն է: Նրա օգտագործումը աշակերտի համապատասխան դասագրքի հետ նախատեսված է՝ որպես քաղաքացիական կրթության դասավանդման օժանդակ նյութ:

Դասագրքի նպատակն է աշակերտներին ներկայացնել քաղաքացիական ակտիվության կարևորությունը ժողովրդավարական պետությունում, երիտասարդներին՝ մտորել տալ մերձավորին սատարելու և աջակցելու մասին, նրանց զինել համագործացության համար անհրաժեշտ հմտություններով և կարողություններով, աշակերտներին ծանոթացնել հնարավոր գործընկերների (կառավարական և ոչ կառավարական կառույցների) գործառույթներին, ուսուցանել նախագիծ կազմել և նրանց պատրաստել նախագծի գործնական իրականացման համար:

Նյութը համապատասխանում է քաղաքացիական կրթության 10-րդ դասարանի ուսումնական պլանին (մասնավորապես, 5-րդ արդյունքին և 10-րդ արդյունքի երկու ստուգիչներին):

Քաղ.Հ.5. Աշակերտը կարող է գիտակցաբար մասնակցել և համագործակցել սոցիալական հիմնախնդիրների վճռմանը:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- Իր բնակավայրում առանձնացնում է տարբեր սոցիալական փոքրամասնությունների (օրինակ՝ միայնակ ծերեր, հաշմանդամներ, անապաստան երեխաներ, գաղթականներ և այլն), դատողություն է անում այս մարդկանց նկատմամբ հասարակայնության վերաբերմունքի առանձնահատկությունների մասին:
- Առանձնացնում է, իր կարծիքով, Վրաստանում առավել խոցելի սոցիալական խմբերը և քննարկում հասարակության կողմից նրանց օգնելու հնարավորությունները, հիմնավորում է իր տեսակետը:
- Համադասարանցիների հետ քննարկում է, թե ինչ ներդրում կարող է անել նա իր բնակավայրում օրվա առողջ ապրելակարգի ժողովրդականացման մեջ, նախանշում է պլան և, դպրոցի ինքնակառավարման մարմինների հետ համաձայնությամբ, ապահովում է տեղեկատվական-կրթական քարոզարշավը:
- Համադասարանցիների մի խմբի հետ ընտրում է այն հասարակական խումբը, որին, նրա կարծիքով, անհրաժեշտ կլինի հանրության աջակցությունը, բացահայտում է այս խմբի ընդհանուր նպատակներն ու խնդիրները, համադասարանցիների հետ պլանավորում է այս հասարակական խմբին (կամ կոնկրետ ներկայացուցչին) օգնելու միջոցառումներ և, դպրոցական ինքնակառավարման աջակցությամբ, համագործակցում է տեղական իշխանությունների հետ՝ ընտրված խմբին օգնելու նպատակով:

- Մասնակցում է դասարանական քննարկման՝ «Ի՞նչ կարող ենք մենք ավելացնել դպրոցին», որի նպատակն է դպրոցի կարիքների և համադասարանցիների համապատասխան ունակությունների հստակեցումը, նախատեսում է նախորդ տարվա ընթացքում իրականացված նմանատիպ աշխատանքի արդյունքները և կազմում է իր սեփական գործողությունների ծրագիրը, որը համաձայնեցնում է համադասարանցիների հետ, նախատեսված գործողություններում (օրինակ՝ դպրոցի գրադարանի կամ մարզադահլիճի լրացում, կրտսեր դասարանցիների էքսկուրսիաներում ուսուցիչների աջակցություն, դպրոցի և նրա շրջակա միջավայրի բարեկարգում և այլն) կատարում է իր համար հատկացված դերը:

Քաղ.Հ.10. Աշակերտը կարող է հետազոտել և օգտագործել Վրաստանի քաղաքացու ակտիվ մասնակցության հնարավորությունները հասարակական-քաղաքական կյանքում:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- Մասնակցում է դպրոցի զարգացման (օրինակ՝ ուսման որակ, տեխնիկական սարքավորումներ, եկամուտների աճ, մասնակցություն ազգային և միջազգային նախագծերի և այլն) հետ կապված դասարանական բանավեճի կամ դպրոցի ինքնակառավարման համապատասխան մարմնի քննարկման, կոնկրետ արտահայտում է և պաշտպանում իր դիրքորոշումը:
- Ընտրում է իր կամ որևէ հասարակական խմբի համար հրատապ խնդիր (օրինակ՝ կրթություն ստանալ, զբաղվածություն, մարդու իրավունքների ոտնահարում, քաղաքացիական վեճեր, հարկային կոնֆլիկտ, սոցիալական ապահովություն, առողջապահության և շրջակա միջավայրի պաշտպանություն, քաղաքական կամ կրոնական խտրականություն և այլն), ձեռք է բերում տեղեկատվություն, որի վերլուծության հիման վրա գրում է կոնկրետ խնդրի լուծման պլան (հնարավոր է մի քանի տարբերակ)՝ կողմերի իրավունքների ու օրինական գործունեության նախատեսմամբ, սահմանում է իր դերը խնդրի լուծման մեջ, իր շուրջ հավաքում է համախոհների և գործում պլանի համաձայն, գնահատում է իր մասնակցության արդյունավետությունն ու հետևանքները տեղեկացնում դասընկերներին:

Նյութը կարող է օգտագործվել 10-րդ դասարանում:

Նյութի ուսուցման մանկավարժական մոտեցումը նախատեսում է աշակերտների քննադատական և տրամաբանական մտածողության զարգացում, հիմնախնդիրների վճռման ժամանակ ծագած բախումների կարգավորման հմտությունների և կարողությունների մշակում:

Նախանշված նպատակների իրականացման մեջ ուսուցչին կօգնի ինտերակտիվ ուսանում-ուսուցման մեթոդաբանությունը: Ուսուցման միջոցներն առանձին են նկարագրված մեթոդական ձեռնարկում:

Նյութը կողմնորոշված է նախագծի ստեղծմանը, այդ պատճառով էլ նախագիծը ներկայացված է և՛ որպես ուսուցման մեթոդ, և՛ որպես ուսուցման նվաճվելիք արդյունք:

Նախագծի վրա հիմված ուսուցումն արդյունավետ, սակայն բավականին աշխատատար մանկավարժական մեթոդ է, որն ուսուցչից պահանջում է համոզմունք, կառուցվածքի կազմում և ուսումնական գործընթացի ամբողջությամբ իմաստավորում: Լավ նախագիծը չի կարող պատահաբար ստեղծվել: Այն կարող է լինել միայն ցանկալի նպատակների նախօրոք իմաստավորման և գործընթացի պլանավորման, նախաձեռնության և ներշնչված աշխատանքի արդյունք:

Աշակերտների կողմից ընտրված նախագծի իրականացումը կզարգացնի նրանց հաղորդակցության և ներկայացման, աշխատանքի կազմակերպման և ժամանակի բաշխման, հետազոտման և հարցման անցկացման, ինքնագնահատման և կշռադատման, համագործակցության և խմբային աշխատանքի կարողությունները, որոնք իսկապես նրանց պիտանի կլինեն առօրյա կյանքում:

Նախագծի ընթացքում հնարավոր է աշակերտներն իրենց մեջ այնպիսի հզոր կողմեր հայտնաբերեն, որ ոչ էլ կարող էին պատկերացնել (լիդերություն, պլանավորման ձիրք, օգնության ցուցաբերման հնարավորություն):

Տվյալ հատկություններն, իրենց հերթին, կնպաստեն աշակերտների հուզական և բարոյական պատկերի բարելավմանը կամ դրանց ձևավորմանը, հասարակության բարօրության համար աշխատանքը կարող է դառնալ նրանց գործունեության մաս, և նրանք կվերածվեն ակտիվ և բարոյական քաղաքացիների:

Հնարավոր է, որ որոշ նախագծեր պահանջեն համագործակցություն այլ առարկաների (օրինակ՝ կենսաբանության, քիմիայի ….) ուսուցիչների հետ:

Ուսանման նյութը բաշխված է 6 դասի: Բացի այդ, ենթադրվում է, որ աշակերտներն արտադասարանական ժամանակ կտրամադրեն նախագծի իրականացմանը: 3-րդ թեմայի հանձնարարությունների կատարումը համեմատաբար շատ ժամանակ է պահանջում, այդ պատճառով այդ թեմայի դասերն, առնվազն, մեկշաբաթյա դադարով պետք է անցկացվեն:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵՆՔ ԳՐՔԻՑ

Գիրքը պարունակում է երեք թեմա, որոնք ներկայացված են վեց դասով: Երեք թեմաներն էլ պետք է մատուցվեն տրված հաջորդականությամբ: Բոլոր դասերը ներկայացված են մանրամասն սցենարի տեսքով: Հաճախ հարցերի կողքին փակագծերում տրված են ճիշտ պատասխանները: Անհնար է նախօրոք ամբողջությամբ կանխատեսել աշակերտների պատասխանները կամ ստեղծված իրավիճակը, սակայն ուսուցչին տրվում են հավանական պատասխանները: Յուրաքանչյուր թեմա ունի հավելվածներ: Աշակերտի գրքում հավելվածների համարակալությունն ընդհանուր է: Ուսուցչի գրքում յուրաքանչյուր հավելված ունի երկու համար, առաջինը մատնանշում է համարն Ուսուցչի գրքում, իսկ փակագծերում բերված թիվը՝ հավելվածի համարն Աշակերտի գրքում: Առաջադրանքները ևս երկակի համարակալություն ունեն: Առաջինը սահմանում է թեմայի համարը, իսկ երկրորդը՝ առաջադրանքի համարը թեմայի ներսում: Ուսուցչի գրքում նշված է, թե որ առաջադրանքը պետք է կատարվի դասարանում և որը՝ դասարանից դուրս: Աշակերտներին հնարավոր անծանոթ բառերը բացատրված են տեքստում և տրված են այբբենական բառարանում: Այբբենական բառարան ունի նաև Ուսուցչի գիրքը: Աշակերտի գիրքը լրացնում է Ուսուցչի գրքին, քանի որ որոշ տեղեկություններ միայն Աշակերտի գրքի մեջ են ընդգրկված: Դասի նախապատրաստման ժամանակ ուսուցիչը պետք է ծանոթանա երկու գրքերին էլ: Տվյալ գրքի վերջում մատնանշված են նաև ուսուցիչների համար օգտակար ռեսուրսները և օգտագործված գրականությունը:

ԿԻՐԱՌԱԾ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Մեթոդները, որ կիրառված են առաջարկված դասերին աշխատելու համար, ծառայում են աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը: Բացի այդ, դրանց միջոցով զարգանում են աշակերտների այն հմտությունները և կարողությունները, որոնք նրանց կօգնեն պրակտիկ գործունեության ծավալման ժամանակ:

Ստորև բերված է կիրառած եղանակների համառոտ նկարագիրը:

ա) Խմբային աշխատանք: Այս մեթոդի միջոցով զարգանում են աշակերտների կարծիքի արտահայտման և դրա հիմնավորման, միմյանց լսելու և ուրիշի կարծիքը հարգելու, քննադատաբար գնահատման, համագործակցության, ընդհանուր եզրահանգման հասնելու հմտությունները և կարողությունները: Հաճախ խմբային աշխատանքի միջոցով հնարավոր է դառնում հաղթահարել աշակերտների ամոթխածության զգացումը: Խմբի անդամների ընտրությունը հնարավոր է կամ ըստ աշակերտների ցանկության, կամ պատահական ընտրության միջոցով: Խմբային աշխատանքն իր կանոններն ունի.

– խումբը լսում է բոլոր մասնակիցների կարծիքները,
– մասնակիցներից մեկն անում է գրառումներ,
– խումբն այնպես է աշխատում, որ չխանգարի մյուս խմբերի աշխատանքին,
– խումբն ընտրում է ներկայացուցիչ, որը մեկնաբանի կներկայացնի աշխատանքը,
– հանձնարարությունը կատարվում է նախօրոք սահմանված ժամանակի ընթացքում:

բ) Զույգերով աշխատանք: Զույգերով աշխատելու սկզբունքը նույնն է, ինչ խմբերով աշխատելունը: Աշակերտները փոխանակում են իրենց կարծիքներն ու հայացքները և աշխատում են ընդհանուր պատասխանի հասնել: Երբեմն զույգերի և խմբերի աշխատանքները կարելի է փակցնել պատի վրա:

գ) Մտավոր գրոհ (բրեյնստորմինգ): Այս եղանակը բաղկացած է մի քանի փուլից.

Առաջին փուլում այն աշակերտներին այս կամ այն հարցի վերաբերյալ ազատ կարծիք արտահայտելու հնարավորություն է տալիս: Ուսուցչից պահանջվում է հստակ ձևակերպել միտքը, ընդունել բոլոր պատասխանները, աշակերտներին կոչ անել ձեռնպահ մնալ վեճերից, գնահատումներից և ծաղրից:

Երկրորդ փուլում աշակերտները մտածում են ստացած պատասխանների մասին կամ դրանց վերաբերյալ դատողություն են անում խմբերում:

Երրորդ փուլում պատասխանները գնահատվում են աշակերտների կողմից, բերվում են որոշակի համակարգի:

Այս եղանակն առանձնապես հետաքրքիր է նոր գաղափարներ ստանալու համար:

դ) Բանավեճն ինտերակտիվ մեթոդաբանության կարևորագույն միջոցներից մեկն է: Բացի այն, որ բանավեճի ժամանակ դրսևորվում է աշակերտների վերաբերմունքը հիմնախնդրի նկատմամբ, նրանց մոտ զարգանում են նաև այնպիսի հմտություններ և կարողություններ, ինչպիսիք են ուրիշի կարծիքն ակտիվորեն ունկնդրելը, հարգելը և ընդունելը, սեփական կարծիքն արտահայտելը և հիմնավորելը: Բանավեճը ճիշտ վարելու համար անհրաժեշտ է այն կազմակերպել և համակարգել: Ուսուցիչը պետք է կարողանա ստեղծել փոխադարձ հարգանքի և բարյացակամ մթնոլորտ: Նա աշակերտներին առաջարկում է պահպանել որոշակի կանոններ՝ չմիջամտել ուրիշի ասածին, չծաղրել միմյանց, չշեղվել թեմայից: Բանավեճի ժամանակ, բացի գլխավոր թեմայից, կարող են ընդգծվել նաև այլ թեմաներ:

«Հարմարեցված բանավեճի» եղանակը կարելի է կիրառել նախագծի պլանավորման փուլում:

Ցանկալի է, որ աշակերտներին նախօրոք բաժանվեն գործողությունների հաջորդականությունը արտացոլող թերթիկներ, և հարմարեցված բանավեճի ընթացքում ուսուցիչը կարգավորի ժամանակաչափի պահպանումը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՑՈԼՈՂ ԹԵՐԹԻԿ

1. Բանավեճին մասնակցում է 4-5 աշակերտից բաղկացած երկու խումբ: Խմբում պետք է միավորված լինեն այն աշակերտները, որոնք միասին են աշխատում նախագծի կամ նրա մի քանի ասպեկտի վրա:

2. Ա խումբը ներկայացնում է իր համոզմունքը, ինչ աշխատանքներ են կատարված և ինչ հետևանքներ են ակնկալվում: Բ խումբը լսում է առանց մեկնաբանությունների և հարցերի առաջադրման: (7 րոպե)

3. Բ խումբը, եթե որևէ բան անորոշ է կամ անհասկանալի, առաջադրում է լրացուցիչ հարցեր՝ լսած տեղեկությունը ճշգրտելու համար: (4 րոպե)

4. Բ խումբը ձևակերպում է «տաք» և «սառը» (տաքը՝ դրական, իսկ սառը քննադատական տրամադրվածություն արտացոլող) հարցեր Ա խմբի համար: (2 րոպե)

5. Բ խմբի անդամները իրար հետ քննարկում են լսածը և ներկայացնում «տաք» մեկնաբանություններ: Ա խումբն իր մոտ նշում է այս մեկնաբանությունները, սակայն չի պատասխանում դրանց: (4 րոպե)

6. Բ խմբի անդամերն իրար հետ քննարկում են լսածը և ներկայացնում են «սառը» (սակայն ոչ խիստ) մեկնաբանություններ: Ա խումբն իր մոտ նշում է այս մեկնաբանությունները, սակայն չի պատասխանում դրանց: (4 րոպե)

7. Ա խումբը պատասխանում է մեկնաբանություններին և բաց բանավեճի բռնվում Բ խմբի հետ: (4 րոպե)

Այնուհետև դերերը փոխվում են. այժմ Բ խումբն է ներկայացնում նախագիծ: Այս մեթոդը հնարավոր է կիրառել երեք խմբերի հետ: Խմբերի դերերը փոխվում են այնքան ժամանակ, մինչև չպարզվի, որ երեքն էլ ներկայացրել են նախագիծը և ստացել մեկնաբանություններ: Ժամանակի բաշխումը կարելի է փոխել՝ ելնելով խմբերի անհրաժեշտություններից, սակայն անհրաժեշտ է անցնել յուրաքանչյուր աստիճանը:

«Կլոր ակվարիումը» դասարանական բանավեճի տեսակներից մեկն է: Այն կիրառում են գնահատման և կշռադատման համար: «Կլոր ակվարիումի» առավելությունն այն է, որ բանավեճն ընթանում է աշակերտների փոքրիկ խմբում: Մնացած դասարանը լսարանի դերում է, որը ժամանակ առ ժամանակ կարող է մասնակցել բանավեճին:

- Աշակերտներն այնպես պետք է նստեն, որ մեծ շրջան ստացվի:
- Մեծ շրջանի ներսում պետք է տեղավորվի 5-7 աշակերտից բաղկացած փոքր շրջան:
- Փոքրիկ շրջանի համար ընտրված աշակերտների միջև մեկ ազատ տեղ պետք է մնա:
- Ներքին շրջանում նստած աշակերտները քննարկում են նախագծի արդյունքները: Արտաքին շրջանի աշակերտները լսում են: Ներքին շրջանում ազատ աթոռը կարող է զբաղեցնել արտաքին շրջանի այն ներկայացուցիչը, որը հարց կամ մեկնաբանություն ունի: Հարց առաջադրելուց կամ մեկնաբանություն անելուց հետո աշակերտը վերադառնում է արտաքին շրջան և իր տեղը զիջում ուրիշի:

ե) Նախագիծը երեխաների կողմից տարբեր թեմաներով անցկացված հետազոտություն է: Սա կոնկրետ նպատակի հասնելու համար կազմակերպված գործողություն է: Այն մի շարք գործառույթներ ունի.

- Պատճառաբանող՝ աշակերտը տեսնում է իր գործողության իմաստը:
- Ուսուցողական՝ աշակերտի գիտելիքը և կարողություններն օգտագործվում են նախագծի իրականացման մեջ:
- Տնտեսական՝ աշակերտը սովորում է կանխատեսել հակադրությունները, ճիշտ բաշխել ժամանակը և ռեսուրսները:

- Սոցիալական՝ նախագիծն ընթանում է ուրիշների հետ համագործակցությամբ:
- Քաղաքական՝ կոլեկտիվ գործունեությանը մասնակցելն աշակերտներին տալիս է հասարակական կյանքի որոշակի փորձ:

Նախագիծն իրականացնում է աշակերտների խումբը: Այդ նպատակով ուսուցիչը նրանց պետք է օգնի ընտրել թեման, աշակերտների հետ սահմանի կատարման ժամկետները և աշակերտներին մատնանշի տեղեկատվական աղբյուրները: Մինչև նախագծի վրա աշխատանքը սկսելը, պետք է սահմանվեն նրա նպատակը, խնդիրները, ով է կատարում, ինչ ժամկետներում, ինչ է անհրաժեշտ:

զ) Հարցերի առաջադրում և արձագանք պատասխաններին: Ուսուցիչն աշակերտներին հաճախ առաջադրում է այս կամ այն հարցը: Հարցերը հիմնականում երկու տեսակ են՝ փակ և բաց:

- Փակ հարցը պահանջում է ճշգրիտ և եզակի ճիշտ պատասխան:
- Բաց հարցը ենթադրում է ընդարձակ պատասխան: Հնարավոր են պատասխանների մի քանի՝ ճիշտ կամ վիճելի տարբերակներ:

Հարցի առաջադրման ժամանակ անհրաժեշտ է.

- հարցը հասկանալի լինի ձևակերպված,
- հարցը չպարունակի պատասխան,
- հնչերանգում չընթերցվի պատասխանը:

Անհրաժեշտ է խուսափել այնպիսի հարցերի առաջադրումից, որոնք պահանջում են «այո» կամ «ոչ» պատասխանները: Բոլոր ցանկացողներին պետք է տրվի հարցին պատասխանելու հնարավորություն: Ցանկալի է, որ ուսուցիչը չարտահայտի իր վերաբերմունքը (դրական կամ բացասական) պատասխանի նկատմամբ, մինչև չլսի բոլոր պատասխանները: Չի կարելի ոչ ճիշտ պատասխանի դեպքում կտրուկ արձագանքել: Լավ կլինի, եթե ուսուցիչն աշակերտներին հնարավորություն տա հիմնավորել իրենց պատասխանի ճշմարտացիությունը, և վերջում ինքն արտահայտի կարծիք:

ԹԵՄԱ 1

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԹԵՄԱ 1

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Տվյալ թեմայի վրա աշխատելը կնպաստի այն բանին, որ աշակերտներն ուշադրություն դարձնեն հասարակական հիմնախնդիրներին, գիտակցեն սեփական վերաբերմունքն այս կամ այն հիմնախնդրի նկատմամբ: Թեմային մեկ դաս է տրամադրվում: Մինչև այս դասը սկսելը, ուսուցիչը հինգ րոպեանոց զրույց է անցկացնում աշակերտների հետ: Նրանց ծանոթացնում է նյութը և ասում, որ այն կօգնի նրանց կոնկրետ նախագծերի իրականացման մեջ: Աշակերտներին տանը հանձնարարվում են 1.1 և 1.2 առաջադրանքները:

1.1 առաջադրանքը պահանջում է տեքստի ընթերցում, մտորում սեփական հույզերի և հերոսների հիմնախնդիրների մասին, իսկ 1.2 առաջադրանքը՝ հասարակությունում առկա հիմնախնդիրների թվարկում, ինչը միջնակարգ աստիճանի աշակերտների համար դժվար չէ: Սրանք խթանող առաջադրանքներ են և տանն են հանձնարարվում ժամանակ շահելու նպատակով, որպեսզի աշակերտները դասի գնան արդեն իսկ այս թեմայի վրա աշխատելուն տրամադրված:

ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ ԷՋ 11-13

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.1

ա) Կարդացե՛ք ստորև բերված արտահայտությունները, նաև երկու տեքստերը՝ «Երբ մարդու հետևից մարդ է վազում» և «Իմ ոսկյա ակվարիումը»: Իմաստավորե՛ք դրանք: Ուշադրությո՛ւն դարձրեք ձեր հույզերին: Մեկ կամ երկու բառով ձևակերպե՛ք, թե ինչի մասին է խոսքը:

բ) Կարդացած ստեղծագործություններից դո՛ւրս գրեք գործող անձանց անձնական և հասարակությունում առկա հիմնախնդիրները:

«Հայրենիքի յուրաքանչյուր զավակ իր ուժ ու եռանդով պետք է ծառայի իր հայրենիքին, պետք է մտածի հայրենակիցների շահերի մասին, և որքան խելամիտ լինի նրա աշխատանքը, որքան նրա վաստակը պիտանի լինի հայրենի երկրին, նույնքան օգտակար կլինի այն ողջ մարդկության համար»:

Վաժա-Փշավելա

ՎԱԺԱ-ՓՇԱՎԵԼԱ (1861-1915) - վրաց գրող

«Բարի մտադրությունը ոչինչ է, եթե այն չվերաճի բարի գործի»:

Պետրուս Յակոբուս Ժուբեր

ՊԵՏՐՈՒՍ ՅԱԿՈԲՈՒՍ ԺՈՒԲԵՐ (1834-1900) - 1880-1900թթ. Տրանսվաալի Բուրերի Հանրապետության բանակի զորահրամատար, Տրանսվաալի փոխնախագահ 1898 թվականից

«Մեզանից ոչ ոք իրավունք չունի տեսնելու այն տանջանքը, որի համար իրականում ինքը պատասխանատու չէ, և չկանխել այն»:

Ալբերտ Շվայցեր

ԱԼԲԵՐՏ ՇՎԱՅՑԵՐ (1875-1965) - գերմանա-ֆրանսիական փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչ, բժիշկ, երաժշտագետ, երգեհոնահար





ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ (1828-1910) - ռուս գրականության դասական, լուսավորիչ, կրոնական մտածող, հրապարակախոս

«Աղավնու բարությունն առաքինություն չէ: Աղավնին գայլից ոչնչով ավելի առաքինի չէ: Առաքինությունը միայն ջանքի հետ է սկսվում»:

Լև Տոլստոյ

ՖՐԱՆՑ ԿԱՖԿԱ (1883-1924) - հրեական ծագումով գերմանացի գրող, ճանաչված՝ որպես 20-րդ դարի ամենաականավոր և ազդեցիկ ներկայացուցիչ

ԵՐԲ ՄԱՐԴՈՒ ՀԵՏԵՎԻՑ ՄԱՐԴ Է ՎԱԶՈՒՄ

Երբ գիշերը զբոսնում ես փողոցով և տեսնում, որ հանդիպակաց ուղղությամբ մարդ է վազում, դու այդ անծանոթի ձեռքից չես բռնում և չես կանգնեցնում, թեկուզ նա թույլ լինի և ցնցոտիավոր, թեկուզ նրան հետապնդի որևէ մեկը և բացականչի՝ բռնեցե՛ք … Դու չես կանխի անծանոթի վազքը … քանի որ գիշեր է, և քո մեղքը չէ, որ փողոցը լուսնի լույսով է լուսավորված: Բացի այդ, գուցե նրանք զվարճանում են միմյանց հետևից վազելով, գուցե երկուսով մի երրորդ անձի են հետապնդում, գուցե մեկին անտեղի են հետապնդում, գուցե երկրորդն ուզում է առաջինին սպանել, իսկ դու, ինչ է, սպանության համամասնակի՞ց ես դառնալու: Գուցե այս երկուսը միմյանցից անտեղյակ իրենց համար դեպի իրենց տներն են վազում, գուցե սրանք լուսնոտներ են, գուցե առաջինը նույնիսկ զենք ունի մոտը … Եվ վերջ ի վերջո, մի՞թե գերհոգնած լինելու իրավունք չունենք: Մի՞թե մի քիչ գինի չենք խմել: Եվ դու ուրախ ես, որ երկուսն էլ կորչում են քո տեսադաշտից …

Ֆրանց Կաֆկա

ԻՄ ՈՍԿՅԱ ԱԿՎԱՐԻՈՒՄԸ

– Չեմ կարող հետը գնալ, չեմ կարող հետը գնալ, նա ինձ ծովի մեջտեղը կտանի:

– Իմ Նինիկո, իմ Ն …

– Աննա՛, բավական է, անցումով ենք անցնում:

– Աննա՛, Աննա՛: Ես կերգեմ քո փոխարեն, մայրիկը չի բարկանա քեզ վրա և դու գոնե կպարես,–առաջարկեց ինձ մայիսյան բզեզի մուշտակի մեջ փաթաթված Նինիկոն և ծամածռեց դեմքը:

Ոչ էլ ուշադրություն դարձրի Նինոյին, ենթարկվեցի մորս և հանգիստ անցանք անցումը:

– Մայրի՛կ, մայրի՛կ, փորս ցավում է:

– Ոչինչ, շուտով տուն կհասնենք, քնելուց առաջ դեղ կտամ,– պատասխանեց մայրս:

Արագացրինք քայլերս: Այժմ արդեն հստակ տեսնում էի մեր բակը. անսովոր դատարկված, կարծես բոլորը միասին քոչել էին: Շուտով երևաց մեր շքամուտքը՝ մութ ու լքված: Ես սկսեցի կարդալ հազար անգամ կարդացած «փորագրությունները»՝ «Գիո+Լիզա=սիրտ»: «Կորչի՛ Շևարդնաձեն»: «Բավակա՛ն է անկում ապրել»: Մայրս բանալին էր փնտրում պայուսակի մեջ, Նինոն բաց բերանով մազերն էր ոլորում, ինչը նրա մասին էր խոսում, որ արդեն շատ էր ուզում քնել: Կարծես ամեն ինչ լավ պետք է ավարտվեր: Մայրս պետք է գտներ բանալին, բացեր շքամուտքի դուռը, մենք անտեղի պետք է հույս ունենայինք, որ կգար վերելակը: Աստիճաններով տուն կբարձրանայինք, մայրիկը կբացեր դուռը, մեզ կկերակրեր տաք շոկոլադով ու մի քիչ ընկույզով թխվածքով: Հետո ինձ դեղ կտար: Քնելուց առաջ հայրս էլ կգար, դպրոցի համար ինձ դեղին դրամ կտար, ու ես քաղցր քուն կմտնեի: Սակայն այդ օրը ամեն ինչ այնպես չեղավ, ինչպես լինելու էր: Մայրս դեռ բանալին էր փնտրում:

Քամին այնպես փչեց, որ նույնիսկ իմ տաք մուշտակի մեջ զգացի ցուրտը, սրթսրթացի ու նայեցի դռան վերևում աղոտ վառվող

լամպին, որը երկար թրթռալուց հետո մթնեց ու մարեց: Կատվի մլավոց լսեցի, հայացքով նայեցի ձայնի ուղղությամբ ու մթության մեջ նկատեցի եկող մարդու ուրվապատկերը: Նա կամաց-կամաց մոտենում էր մեզ: Մայրիկս գտավ բանալին և այն է, պետք է բացեր դուռը, երբ անծանոթը բախվեց նրան: Ոչինչ չկռահեցի, սպասում էի ներողության, սակայն փոխարենը իսկական մարտադաշտի ականատես դարձա. ուրվապատկերը մորս պայուսակն էր քաշում, մայրս չէր զիջում: Կատուն մլավում էր, անծանոթը հայհոյում, ես բղավում էի, Նինոն լալիս էր, իսկ մայրս հորս էր կանչում: Չեմ հիշում, թե որքան շարունակվեց այս տեսարանը, հավանաբար մի քանի վայրկյան, սակայն այս ամենն իմ գիտակցության մեջ հավերժ նստվածք թողեց: Փշրվեց այն ոսկյա ակվարիումը, որում ապրում էի մինչև այդ, ինչ-որ տեղ կորավ անհոգության զգացումը: Ինչ խոսք, գիտեի, թե ինչ էր տեղի ունենում իմ տնից դուրս, սակայն այդ ամենն ինձ չէր վերաբերել, ես իմ պաշտպանված աշխարհն ունեի՝ երգերով, շոկոլադե թխվածքով և դեղին դրամով լի: Երբեք չէի պատկերացրել, որ հեռուստացույցի իրականությունն իմ իրականությունն է նաև: Ի վերջո մայրս վայր ընկավ, անծանոթը պայուսակն առած փախավ, ես սկսեցի հետապնդել նրան: Չեմ հիշում, թե ինչ էի մտածում, եթե հասնեի նրան, ինչ էի անելու, սակայն երբ վերադարձա հանդիսավոր հայտարարեցի՝ իհարկե, կհասնեի նրան, ուղղակի մի քիչ հեռու էր: Հենց այն ժամանակ՝ ութ տարեկան հասակում ես հասկացա, որ հասարակության յուրաքանչյուր անդամ պարտավոր է հետապնդել «իր գողին», որպեսզի հասարակությունն ավելի լավը դառնա: Մարդու պարտականությունն է ոչ միայն իր տանը, այլ նաև նրանից դուրս ստեղծել հարմարավետություն և երբեք չլինել անտարբեր, քանի որ օրերից մի օր նա ևս կարող է մենակ հայտնվել մութ շքամուտքում և չկարողանալ գտնել բանալին:

Աննա Գվալիա
Գիվի Զալդաստանիշվիլիի անվան Թբիլիսիի Ամերիկյան ակադեմիայի
տասնմեկերորդ դասարանի աշակերտուհի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.2

ա) Մտածե՛ք և գրի՛ առեք հասարակական հիմախնդիրները, որ տեսնում եք դպրոցում, ընտանիքում, քաղաքում, երկրում:

բ) Դիտե՛ք լրատվական հաղորդումները և գրի՛ առեք, թե ինչ հասարակական հիմախնդիրների մասին է խոսքը: Այս հիմախնդիրներն ավելացրե՛ք արդեն կազմած հիմախնդիրների ցանկին:

գ) Կարդացե՛ք լրագրեր և դո՛ւրս գրեք քննարկված հասարակական հիմախնդիրները: Համացանցում գտե՛ք հասարակական հիմախնդիրներ: Դրանք ևս ավելացրեք ցանկին:

ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ ԷՋ 11-13

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ.

Աշակերտներին մտորել տալ իրենց շուրջն առկա հիմնախնդիրների, մարդկանց անտարբերության և դրա հետևանքների, կարեկցանքի, նախաձեռնության և գործողության մասին:

Դասին աշակերտների խթանմանն է ծառայում տանը կատարված առաջադրանքների ստուգումը, ինչին անհրաժեշտ կլինի ոչ ավել, քան 10 րոպե: Ուսուցիչը խնդրում է աշակերտներին ներկայացնել դասարանին 1.1 առաջադրանքի 2–րդ մասը և 1.2 առաջադրանքը (հիմնախնդիրների ցանկ): Նա մեծ թերթի վրա գծապատկեր է գծում (նկար 1) և խնդրում աշակերտներին գծապատկերի մեջ որոշել յուրաքանչյուր հիմնախնդրի տեղը: Գծապատկերը պայմանականորեն արտացոլում է աշակերտի միջավայրը, որն սկսվում է նրա ընտանիքից և աստիճանաբար ընդլայնվում: Հիմնախնդիրները պայմանականորեն կարելի է այսպես բաշխել՝ հիմնախնդիրներ ընտանիքում, դպրոցում, գյուղում/քաղաքում, սեփական երկրում, օտար երկրում, գլոբալ հիմնախնդիրներ:



Նկար 1

Որոշ հիմնախնդիրներ կարող են նույնիսկ մի քանի օղակների մեջ (տարբեր մակարդակներում) հայտնվել: Հիմնախնդիրների ընդգրկումը գծապատկերի մեջ նպաստում է աշակերտների գիտակցության մեջ հիմնախնդիրների շերտավորմանը: Ուսուցիչը խնդրում է աշակերտներին տետրերի մեջ տեղափոխել գծապատկերը և նրանում արտացոլված հիմնախնդիրները:

Այնուհետև ուսուցիչը նշում է, որ բոլոր այս հիմնախնդիրները վերաբերում են մարդուն կամ արտացոլվում նրա վրա: Այս հիմնախնդիրների վճռման փորձը կարող է միտված լինել մարդկանց կոնկրետ խմբի օգնությանը կամ օգտակար լինել ավելի լայն հասարակայնության: Այս հիմնախնդիրների վրա բազմաթիվ հաստատություններ են աշխատում, սակայն, ինչպես երևում է, դա բավական չէ: Գուցե անհրաժեշտ է այդ գործում օգնել նրանց:

Հարցի մեջ թափանցելու նպատակով, ուսուցիչը հարցի շուրջ աշակերտների բանավեճ է կազմակերպում (ոչ ավել, քան 10 րոպե)՝ ի՞նչ վերաբերմունք կարող են ունենալ հասարակության տարբեր անդամներ հարցի նկատմամբ:

Հավանաբար կընդգծվի հետևյալը.

- անհատը չի կարող տեսնել հիմախնդիրը,
- անհատին չի հուզում մարդկանց ճակատագիրը, և նա գտնում է, որ այս հիմախնդիրն իրեն չի վերաբերում և ոչ էլ կվերաբերի (այստեղ պետք է կոնկրետացվի, թե ինչպես են կոչում այսպիսի անտարբեր մարդուն: Նրա կյանքի սկզբունքը «ուրիշի ցավը ցանկապատին՝ չոփ»-ն է),
- անհատը սատարում է մարդկանց և աշխատում օգնել նրանց (գործով սատարում),
- անհատն ինքն է ստեղծում հիմախնդիրներ կամ սրում է դրանք,
- անհատն ուզում է օգնել, սակայն չի կարող (չգիտի, ինչպես օգնի),
- անհատը գտնում է, որ սա նաև իր հիմնախնդիրն է և աշխատում է այն վճռել մասամբ կամ լրիվ,
- անհատը գտնում է, որ այս հիմախնդիրը վերաբերում է նաև իրեն, սակայն ինքը չի կարող վճռել այն և ուրիշից է օգնություն սպասում:

Դատողությունը շարունակվում է հետևյալ ուղղությամբ. ըստ թվարկված վերաբերմունքների՝ մարդկանց պայմանականորեն կարող ենք բաժանել երկու խմբի՝ պասսիվների և ակտիվների:

- Ի՞նչն է դրական արդյունք տալիս՝ ակտիվությունը, թե՞ պասսիվությունը:
- Ինչով կարո՞ղ է հարուցված լինել պասսիվությունը (անտարբերությամբ, ամոթխածությամբ, ծուլությամբ):
- Ըստ ձեզ, ի՞նչ ուղի պետք է անցնի մարդ, որ հաղթահարի անտարբերությունը:

Վերջին հարցի ենթադրյալ պատասխանն է.

- Տեսնի հիմախնդիրը:
- Իրեն պատկերացնի այն մարդկանց տեղում, ում վերաբերում է այս հիմախնդիրը:
- Ժամանակ գտնի և մտորի հիմախնդրի վճռման ուղիների մասին:
- Սկսի գործել:

Ուսուցիչը ուշադրությունը պետք է կենտրոնացնի այն բանի վրա, որ երբեմն մարդուն թվում է, թե ոչինչ չի կարելի անել հիմախնդրի վճռման համար, սակայն դա միշտ չէ, որ այդպես է: Յուրաքանչյուր մարդու համար հիմնախնդրի վճռման հարցում գոնե մի փոքր լումա ներդնելու հնարավորություն կա: Հիմախնդրի մի մասի կարգավորումն էլ առաջընթաց քայլ է: Հնարավոր է գտնել հիմախնդրի բոլորովին անսպասելի, անսովոր

վճիռ: Որոշ կոնկրետ պահերի իսկապես անհնար է մասնակցել հիմնախնդիրների վճռմանը:

Ուսուցիչը վերադառնում է աշակերտների կողմից թվարկված հիմնախնդիրներին և հարց տալիս.

– Թվարկվածներից ո՞ր հիմնախնդիրն եք համարում անվճռելի:

Ծանոթություն: Անհնար է նախօրոք սահմանել, թե ինչ հիմնախնդիրներ կանվանեն աշակերտները: Հավելված 1-ում առաջարկում ենք մի քանի դպրոցներում անցկացված հետազոտության արդյունքում ստացած հիմնախնդիրների ցանկը: Նրա մեջ աստղանիշով նշված են այն հիմնախնդիրները, որոնք երաշխավորվում է քննարկել նախագծի իրականացման համար:

Հիմնախնդիրների նկատմամբ մարդկանց հնարավոր վերաբերմունքների քննարկումից հետո, աշակերտներին դասարանում կատարելու համար տրվում է 1.2 առաջադրանքը: Այս առաջադրանքը նրանց հնարավորություն կտա հեռանալ իրենց շուրջն առկա հիմնախնդիրներից և մտորել տարբեր ժամանակների և ժողովուրդների տարբեր հիմնախնդիրների մասին (կշռադատման փուլ):

Առաջադրանքը կատարվում է խմբերում: Աշակերտները աշխատելու համար իրար մեջ բաժանում են 2 տեքստ՝ «Հատված Ալբերտ Շվայցերի կենսագրությունից» և «Պակիստանցի տղայի պատմությունը»:

ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ ԷՋ 14

ՀԱՏՎԱԾ ԱԼԲԵՐՏ ՇՎԱՅՑԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

1904 թվականի աշնանը Փարիզի միսիոներների ընկերության ամսագրում տպագրվում է «Առաքելության դժվարությունը Կոնգոյում» հոդվածը: Նրանում նկարագրված էր այն ծանր վիճակը, որում հայտնվել են քարոզիչները, որոնք փորձում էին օգնել հազար տեսակ հիվանդություններով տանջված Գաբոնի գավառի բնակիչներին. «Փոքրիկ բանակին, որ պայքարում է Օգովեի առափնյակում, անհրաժեշտ է ուժ, էներգիա: Գուցե այս կոչը հասնի մինչև ընթերցողի սիրտը …»:

Այդ ժամանակ 29 տարեկան էլզասցի Ալբերտ Շվայցերն արդեն փիլիսոփայության դոկտոր էր, աստվածաբանության լիցենցիանտ, սեմինարիայի ղեկավար, անվանի երգեհոնահար և երաժշտագետ, փիլիսոփայության, աստվածաբանության և երաժշտության բազմաթիվ հետաքրքիր գրքերի հեղինակ: Ուներ ծնողներ, քույր և եղբայր: Նրան շատ էին սիրում ուսանողները: Նրա կողքին էր հոյակապ Էլենը, որը սիրում և հասկանում էր նրան: Շվայցերին անչափ հուզեց կարդացած տեղեկագիրը, սակայն … որոշում կայացրեց և հանդարտվեց:

ԲԱՌԱՐԱՆ

ՄԻՍԻՈՆԵՐ - (ֆր. missionaire) քարոզիչ, քրիստոնեական եկեղեցու կողմից առաքված անձ՝ կրոնական քարոզչություն վարելու և այլ դավանանքների մարդկանց դարձի բերելու համար:

ԳԱԲՈՆ – այսօր անկախ պետություն:

ԷԼԶԱՍ – տարածաշրջան Հյուսիս-Արևելյան Ֆրանսիայում: Տեքստում նշված ժամանակաշրջանում այն Գերմանիային է պատկանել:

ԹԵՈԼՈԳԻԱ - աստվածաբանություն, կրոնական վարդապետությունների և ուսմունքների միասնականություն:

ՊԱԿԻՍՏԱՆՑԻ ՏՂԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1995 թվականի մի առավոտ 12-ամյա կանադացի Կրեգ Կյելբյուրգերը դպրոց գնալուց առաջ, ըստ սովորության, վերցրեց «Տորոնտոյի աստղը» թերթը՝ ծաղրաշար գտնելու նպատակով: Առաջին էջին նա տեսավ մի լուսանկար, որը հիմովին փոխեց նրա կյանքը: Լուսանկարի վրա պատկերված էր նրա հասակակից պակիստանցի Իքմալ Մարիհը: Հոդվածում գրված էր, որ երեխային ստրկության էին վաճառել 4 տարեկան հասակում, ինչից հետո նա ստիպված է եղել 6 տարի ֆաբրիկայում մանածագործ աշխատել: Երբ դարձել է 10 տարեկան, փրկվել է փախչելով և աշխատել է ամենուրեք բացահայտել երեխաներին շահագործելու փաստերը: Նա ցանկանում էր իր ձայնը հասցնել տարբեր երկրներ և ցույց տալ, թե ինչպիսի ծանր վիճակում են գտնվում բազմաթիվ երեխաներ: Կային մարդիկ, որոնք չէին հավանում նրա բողոքը, ինչի պատճառով էլ նրան սպանում են:

ԲԱՌԱՐԱՆ

ԼԻՑԵՆՑԻԱՆՏ - 1. առաջին գիտական աստիճանը Արևմտյան Եվրոպայի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում, շնորհվում է բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու 3-րդ կամ 4-րդ տարում: Այն միջնակարգ ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոն ստանձնելու իրավունք է տալիս: 2. Գիտական աստիճան որոշ համալսարաններում, բակալավրի և մագիստրոսի աստիճանների միջև:

ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ ԷՋ 14

Ուսուցիչն առաջարկում է դասարանին բաժանվել 4 խմբի և հիշեցնում է խմբում աշխատելու կանոնները.

Խումբը լսում է բոլոր մասնակիցների կարծիքները:

- Մասնակիցներից մեկը գրառումներ է անում:
- Խումբն ընտրում է ներկայացուցիչ, որը մեկնաբանում է ներկայացնում է աշխատանքը:
- Խումբն աշխատում է այնպես, որ չխանգարի մյուս խմբերի աշխատանքին:

Հանձնարարության կատարման համար աշակերտներին տրվում է 15 րոպե, իսկ ներկայացնելու համար՝ երկուական րոպե: Ներկայացնելուց առաջ դասարանում պարտադիր երկու տեսքտերն էլ բարձրաձայն մեկական անգամ պետք է ընթերցվեն:

ԲԱԺԱՆ-ՎԵՐՔ ՀՈՐՍ ԽՄԲԻ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.3 ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

Կարդացե՛ք «Հատված Ալբերտ Շվայցերի կենսագրությունից» տեքստը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա) Ինչո՞ւմ էր կայանում հոդվածում նկարագրված հիմախնդիրը:

բ) Այս հոդվածը, հավանաբար, տասնյակ մարդիկ կկարդային: Ի՞նչ արձագանք կարող էր ունենալ ընթերցողը:

գ) Երբ ավելի դժվար կլիներ օգնություն ցուցաբերել՝ 1904 թվականին, թե՞ այսօր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.3 ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

Կարդացե՛ք «Պակիստանցի տղայի պատմությունը» և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա) Ի՞նչն է անչափահաս երեխաներին վաճառելու և նրանց աշխատանքի ուղարկելու պատճառը:

բ) Ընթերցողն ինչպե՞ս պետք է արձագանքի հոդվածին:

գ) Ի՞նչ կարելի է տեսնել այս հոդվածում:

դ) Ի՞նչ հետևանք կարող էր ունենալ հոդվածի տպագրումը, երբ արդեն տղան սպանված էր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.3 ԵՐՐՈՐԴ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

Կարդացե՛ք «Հատված Ալբերտ Շվայցերի կենսագրությունից» տեքստը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա) Քարտեզի վրա գտե՛ք տեքստում հիշատակված բոլոր աշխարհագրական վայրերը:

բ) Հիմախնդիրների գծապատկերի համապատասխան շրջանակում գրե՛ք հիմախնդիրները (Ալբերտ Շվայցերի դիրքորոշումից):

գ) Մտածե՛ք, թե դարաշրջանի նախատեսմամբ որ կոնկրետ անձը կամ կազմակերպությունը կարող էր հոգալ հոդվածում նկարագրված հիմախնդիրների վճռման մասին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.3 ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

Կարդացե՛ք «Պակիստանցի տղայի պատմությունը» և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա) Քարտեզի վրա գտե՛ք տեքստում հիշատակված բոլոր աշխարհագրական վայրերը:

բ) Հիմախնդիրների գծապատկերի համապատասխան շրջանակում գրե՛ք հիմախնդիրները (Կրեգ Կյելբյուրգերի դիրքորոշումից):

գ) Մտածե՛ք, թե որ կոնկրետ անձը կամ կազմակերպությունը կարող էր հոգալ հոդվածում նկարագրված հիմախնդիրների վճռման մասին:

Շնորհանդեսների վերջում ուսուցիչը աշակերտների ուշադրությունը պետք է կենտրոնացնի յուրաքանչյուր տեքստից մեկական նախադասության վրա. «Շվայցերին անչափ հուզեց կարդացած տեղեկագիրը» և «Առաջին էջի վրա նա տեսավ մի լուսանկար, որը հիմնովին փոխեց նրա կյանքը»: Նա պետք է ընդգծի այն փաստը, որ երկու դեպքում էլ մարդկանց անհանգստացրել է հեռավոր երկրներում ապրող ժողովուրդների վիճակը, որ այսօր տարբեր երկրներում ժողովրդին օգնություն ցուցաբերող միջազգային կազմակերպությունների բազմաքանակությունը բխում է ընդհանրապես մարդուն օգնելու ցանկությունից:

Ուսուցիչը պետք է նշի, որ սատարումը կամ որևէ բան փոխելու ցանկությունը, հաճախ բավարար արդյունքներ չեն տալիս, անհրաժեշտ է նախաձեռնություն հանդես բերել: Նա պետք է հարցեր առաջադրի.

– Ինչպե՞ս եք հասկանում «նախաձեռնություն» բառը:

– Ի՞նչ տարբերություն կա նախաձեռնության և գործողության միջև:

Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը բացատրում է աշակերտներին, որ նախաձեռնությունն առաջին քայլն է որևէ գործի մեջ, ներքին մղումը՝ գործողություն սկսելու համար: Մարդ կարող է սկսել գործել, սակայն այս գործողությունը կարող է սկսվել ուրիշի կողմից հանդես բերված նախաձեռնությունից:

Շնորհանդեսների շուրջ դատողությունն ավարտելուց հետո ուսուցիչն աշակերտներին տանը հանձնարարում է 1.4 առաջադրանքը: Առաջադրանքն առանձին-առանձին տրվում է Ալբերտ Շվայցերի կենսագրությունից հատվածի և պակիստանցի տղայի պատմության վրա աշխատող աշակերտներին:

1.4 առաջադրանքը նրանց ներկայացնում է կարիքավորներին օգնելու համար կայացրած անսպասելի որոշումները և հաջորդական գործողությունների դրական արդյունքը: Բացի այդ, այն աշակերտներից պահանջում է գործողությունների վերլուծություն: Առաջադրանքի վրա աշխատելու համար աշակերտներին տրվում է 2 տեքստ՝ «Ալբերտ Շվայցերի որոշումը» և «Կրեգ Կյելբյուրգերի որոշումը»:

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԱԼԲԵՐՏ ՇՎԱՅՑԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1905 թվականին Շվայցերն իր ընկերներին հայտարարեց, որ որոշել է բժշկական կրթություն ստանալ և որպես բժիշկ մեկնել Աֆրիկա: Նա սկսեց գումար հավաքել Լամբարենեի հիվանդանոցի համար: Նրա համար դրամի հիմնական աղբյուր հանդիսանում էր փիլիսոփայությունից և բժշկությունից իր գրած գրքերի հրապարակումը: Նա կապվեց Ֆրանսիայի Կարմիր խաչի առաքելության հետ, որը հանձն առավ հիվանդանոցի կառուցումը:

1913 թվականի գարնանը Շվայցերը, արդեն բժշկության դոկտոր, կնոջ (նա բուժքույրերի դասընթացներ էր անցել) հետ ուղևորվեց Գաբոն: Հիվանդանոցի շինարարությունը դեռ չէր սկսվել: Բժիշկը հիվանդներին էր ընդունում և զուգահեռաբար կառուցում էր հիվանդանոցը: Տարին մեկ անգամ Եվրոպա էր մեկնում, դասախոսություններ էր կարդում երաժշտագիտությունից ու իր հիվանդանոցի մասին: Սրանից ստացած եկամուտն օգտագործում էր հիվանդանոցի համար: 1924 թվականից Շվայցերին մշտապես օգնում էին Եվրոպայից հերթով ժամանող բժիշկները:

ԿՐԵԳ ԿՅԵԼԲՅՈՒՐԳԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Կրեգը հասկացավ, որ անարդարության դեմ կարող է պայքարել նաև երեխան: Նա իր 11 համադասարանցիների հետ ձևավորեց մի կազմակերպություն, որի "Enfants Entraide" ֆրանսերեն անվանումը, «Երեխաների փոխօգնություն» բառացի թարգմանությամբ, անգլերեն այսպես է հնչում՝ "Free The Children" (Ազատե՛ք երեխաներին): Կազմակերպությունը նպատակադրում է երեխաներին ազատել աղքատությունից և շահագործումից:

Կրեգի գաղափարը ձնագնդի նման գլորվեց: Կրեգը շրջեց շատ երկրներ, այցելեց սարսափելի պայմաններում գտնվող երեխաների և նրանց պատմությունը ներկայացրեց մնացած



աշխարհին: Նա աշխարհում շատ գործընկերներ և երկրպագուներ ունի: Ոմանք ֆինանսական օգնություն են ցուցաբերում, ոմանք՝ մասնագիտական: Շատ մարդիկ աշխատում են տարածել կազմակերպության տեղեկագիրը և բացատրել նրա նպատակները: «Ազատե՛ք երեխաներին»-ը ծրագրեր է իրականացնում աշխարհի 45 երկրներում մեկ միլիոնից ավելի երեխաների համար: Ծրագրերն այդ երեխաներին կրթություն ստանալու հնարավորություն են տալիս, իսկ նրանց ընտանիքներին օժանդակում են աղքատության հաղթահարման, բնակելի պայմանների բարելավման հարցում (խմելու ջուր են հասցնում այն գյուղեր, որտեղ չկա ջուր, և երեխաները հեռվից են բերում): Օգնություն են ցուցաբերում հիվանդանոցներին: Ծայրահեղ աղքատության հաղթահարումը և դպրոցում կրթություն ստանալու հնարավորությունը ծնողներին հնարավորություն է տալիս թույլ չտալ իրենց երեխաներին անչափահաս տարիքում աշխատել:

«Ազատե՛ք երեխաներին» կազմակերպության տարբերանշանը

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.4 ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Կարդացե՛ք «Այլբերտ Շվայցերի որոշումը» և պատասխանե՛ք հարցերին.

ա) Ի՞նչ արդյունք ունեցավ Շվայցերի գործողությունը:

բ) Արդյոք բոլորը կարո՞ղ են այսպես վարվել:

գ) Պայմանականորեն գրե՛ք Շվայցերի գործողությունների պլանը (հաջորդականությունը)՝ հոդվածը կարդալուց հետո:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.4 ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Կարդացե՛ք «Կրեգ Կյելբյուրգերի որոշումը» և պատասխանե՛ք հարցերին.

ա) Ի՞նչ արդյունքներ ունի «Ազատե՛ք երեխաներին» կազմակերպության աշխատանքը:

բ) Այս կազմակերպությունը կարողանո՞ւմ է վճռել բոլոր երեխաների հիմնախնդիրները:

գ) Գրե՛ք Կրեգի գործողությունների պլանը (հաջորդականությունը)՝ հոդվածը կարդալուց հետո:

ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ ԷՋ 16-17

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՎԱՐԿՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Ծնողների հետ հարաբերությունը
2. Ուսուցիչների հետ հարաբերությունը
3. Աղտոտված փողոցը*
4. Ցինիզմը՝ երեխաների կողմից միմյանց ստորացումը (սոցիալական հիմքի վրա, արտաքին նշանների պատճառով)
5. Ոգելից խմիչքներից կախվածությունը*
6. Ծեծկռտուքները, փողոցային հաշիվների պարզումը
7. Զբաղվածության հիմախնդիրը՝ գործազրկությունը
8. Գիրքը և համակարգիչը*
9. Մուրացկանները փողոցում
10. Թմրամոլությունը*
11. Հերյուրանքները
12. Սոցիալական անարդարությունը
13. Դեռահասների ֆիզիկական աշխատանքը (ընտանիքին օգնելու կամ ընտանիքը պահելու համար)*
14. Կախվածությունը ծխախոտից*
15. Բռնությունն աղջիկների միջև
16. Հարաբերությունը մանդատայինների հետ
17. Հեռուստահաղորդումների որակը
18. Գրքեր դպրոց տանելը (ծանր է)*
19. Մտքի ազատ արտահայտման հնարավորության սահմանափակումը
20. Վաղ կազմած ընտանիքը
21. Ուսուցչի աշխատավարձը
22. Հիգիենան ընդհանրապես*
23. Տնտեսական հիմախնդիրները
24. Անվստահությունը հասարակությունում
25. Թափառող շները
26. Ծնողազուրկ երեխաները*
27. Իշխանությունը չի օգնում կարիքավորներին
28. Հասարակության մեջ չկա կարեկցանք
29. Փոխհասկացության հիմախնդիրը
30. ՁԻԱՀ-ը*
31. Մարդիկ գրգռված են
32. Անտեղի կատակները
33. Բանտի զգացողությունը դպրոցում
34. Բռնություն պարունակող ուսումական միջավայրը
35. 11-րդ դասարանցիները ստիպված են մինչև ժամը 15:30-ը լինել դպրոցում
36. Դպրոցում թույլ չեն տալիս ծխախոտ ծխել
37. Ստիպում են համազգեստ կրել (սև տաբատ)
38. Ավարտական քննությունները
39. Մաքրությունը դպրոցում*
40. Ընտանեկան բախումները
41. Ռասայական խտրականությունը*
42. Գենդերային խտրականությունը*
43. Ոչ առողջ վերաբերմունքը հեղինակությունների նկատմամբ
44. Կրոնական անհանդուրժողականությունը*

---

* Նախագծի իրականացման համար երաշխավորված թեմաներ

ԹԵՄԱ 2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ: ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ: ԲԱԽՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԹԵՄԱ 2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ: ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ: ԲԱԽՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Տվյալ թեմայի վրա աշխատելիս՝ ուսուցիչը և աշակերտները քննարկում են հաջող և անհաջող համագործակցության օրինակներ, քննարկում են անհաջողության պատճառները, կազմում են կանոններ հաջող համագործակցության համար: Ինքնուրույն ծանոթանում են տարբեր հնարավոր գործընկերների գործառույթներին:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ.

- Աշակերտներին ցույց տալ համագործակցության դրական կողմերը:
- Ընդհանուր նախագծի վրա աշխատող գործընկերների ընտրության սկզբունքների և համագործակցության կանոնների կազմում աշակերտների հետ:
- Աշխատանքի գործընթացում հնարավոր բախումների կառավարման կանոններին ծանոթացում:
- Նախագծի իրականացման ժամանակ աշակերտներին հնարավոր գործընկերների գործառույթներին ծանոթացում:

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

Նախորդ և ընթացիկ դասերի միջև կամուրջ ձգելու համար քննարկվում են տնային առաջադրանքները: Քննարկմանը նախորդում է աշակերտների բաժանումը երկու խմբի (ըստ առաջադրանքի տեքստի՝ առաջին և երրորդ, երկրորդ և չորրորդ): Նրանք 10 րոպեի ընթացքում խմբում կամփոփեն տնային առաջադրանքի (1.4) անհատական պատասխանները և Ալբերտ Շվայցերի ու Կրեգ Կյելբյուրգերի գործողությունների հաջորդականության ամփոփված տարբերակները կներկայացնեն ուսուցչին և դասարանի երկրորդ մասին:

Գործողությունների հաջորդականությունը հավանաբար այսպիսի տեսք կունենա.

I. Շվայցերը տեսավ հիմախնդիրը և նրա մոտ աֆրիկացիներին օգնելու ցանկություն առաջացավ:

– Նախանշեց գործողությունների պլան.

- Բժշկական կրթություն ստանալ:
- Կապ հաստատել Ֆրանսիայի առաքելության հետ:
- Գումար հավաքել՝ գրքերի հրատարակման միջոցով:
- Լամբարենե մեկնել և տեղացիներին բուժել:

– Մինչև Լամբարենե մեկնելը իրականացրեց պլանի առաջին երեք կետը:

– Սկսեց դասախոսություններ կարդալ, հիվանդանոցը ծանոթացնում էր աշխարհին, ինչով շատ աջակիցներ ձեռք բերեց,

որոնք նյութական օգնություն էին ցուցաբերում հիվանդանոցին:
– Հասավ նրան, որ եվրոպական բժիշկները հերթականությամբ սկսեցին մեկնել Լամբարենե:

II. Կրեգը տեսավ հիմնախնդիրը և նրա մոտ երեխաներին օգնելու ցանկություն առաջացավ:
– Իր շուրջը հավաքեց համախոհների:
– Նախանշեց գործողությունների պլան:
- Սկսեց ուսումնասիրել երեխաների վիճակը:
- Նրանց վիճակը ծանոթացրեց մնացած աշխարհին:
- Գտավ հիմնադրամներ:
- Գործարկեց նախագծեր:

Ներկայացված աշխատությունները պետք է փակցվեն գրատախտակին:

Այս աշխատությունների հիման վրա կընթանա դատողություն ստորև թվարկված հարցերի շուրջ: Այս հարցերը աշակերտներին հնարավորություն կտան թափանցել համագործակցության էության մեջ, գիտակցել հաջող համագործակցությանը նպաստող պայմանները և անհաջող համագործակցության պատճառները, ծանոթանալ կամավորության և նախաձեռնության հասկացություններին:
– Ի՞նչն է ընդհանուր այս երկու պատմությունների միջև (երկուսն էլ տեսել են հիմնախնդիրը, որոշել են օգնել, երկուսն էլ փորձել են համագործակցել ինչ-որ մեկի հետ, երկու դեպքում էլ գործ ունենք կարեկցող և ակտիվ մարդկանց հետ և այլն):
– Ինչո՞ւ երկուսն էլ մտածեցին համագործակցության մասին:
– Ինչպե՞ս ավարտվեց Շվայցերի համագործակցությունը Ֆրանսիայի Կարմիր խաչի ընկերության հետ: (անհաջող)
– Որքանո՞վ հաջող էր նրա համագործակցությունն ուրիշների հետ:
– Ինչի՞ համաձայն Կրեգն ընտրեց աշխատակիցներին: (ընդհանուր շահերի)
– Ի՞նչը կարող է լինել անհաջող համագործակցության պատճառ: (համագործակցության ոչ ճիշտ ընտրությունը, նրանց անպատասխանատվությունը, նրանցից անկախ պատճառներ և այլն)
– Ի՞նչն է կարևոր հաջող համագործակցության համար:
– Ի՞նչ է ձեզ ասում «համագործակցություն» բառը:
– Գիտե՞ք արդյոք որևէ լեզվով նրա համապատասխան բառը (անգլերեն՝ cooperation, collaboration, ֆրանսերեն՝ collaboration, coopération, ռուսերեն՝ сотрудничество):

Համագործակցության համար գործընկեր ես ընտրում.
- ըստ հետաքրքրությունների,
- ըստ կարողությունների,
- ըստ իրավազորության,
- ըստ անհատական հատկանիշների և այլն:

Համագործակցությունը լուրջ հարաբերություն է և պահանջում է որոշակի կանոնների պահպանում:

– Ի՞նչ կանոններ պետք է պահպանես համագործակցության ժամանակ:

Աշակերտների կողմից առաջարկված համագործակցության կանոններն ի մի են բերվում և գրվում գրատախտակի վրա: Օրինակ.

- լսել միմյանց,
- հարգել միմյանց,
- համատեղ կազմել պլանը,
- պահպանել համաձայնեցված ժամկետները և այլն:

Համագործակցությունը կարող է իրականացվել տարբեր մակարդակներով:

I. Սկզբից գործընկեր ես ընտրում ըստ հետաքրքրությունների: Այսպիսի դեպքերում երկարատև համագործակցության համար կարող է ակումբ հիմնել:

Ակումբն ընդհանուր հետաքրքրություններ կամ նպատակներ ունեցող մարդկանց կամավոր միավորում է: Ակումբները կարող են լինել տարբեր ուղղությունների՝ մարզական, երաժշտական, կրոնական, քաղաքացիական, հասարակական գործունեության, բարեգործության և այլն:

II. Համագործակցություն մարդկանց կամ կազմակերպությունների հետ, որոնք կարող են կամ իրավազոր են մասնակցել այս կամ այն հիմնախնդրի վճռմանը:

Այսպիսիք կարող են լինել ոչ կառավարական կազմակերպությունները, դպրոցի ինքնակառավարումը, տեղական ինքնակառավարումը և այլն:

Նախագծի իրականացման ժամանակ հնարավոր է տեղի ունենա բախում գործընկերների միջև: Այս դեպքը ևս պետք է քննարկվի դասի ժամանակ:

- Կարո՞ղ է արդյոք տեղի ունենալ բախում համագործակցության ժամանակ:

- Ինչպե՞ս կարելի է կարգավորել այն:

Գոյություն չունի բախման կարգավորման համապիտանի դեղատոմս, սակայն բոլոր դեպքերում պարտադիր է.

- Պարզել բախման պատճառը: Դրա համար անհրաժեշտ է, որ կողմերը լսեն միմյանց:

- Կողմերը պետք է փորձեն ելք գտնել ստեղծված իրավիճակից:

- Եթե ելք չգտնվի, հետաքրքված կողմը պետք է համագործակցության համար այլ գործընկեր գտնի:

Ուսուցիչը կարող է աշակերտներին խնդրել, որ իրենց դասարանի փորձից մտաբերեն չկայացած համագործակցության օրինակ և ներկայացված հարցերի ֆոնի վրա փորձեն վերլուծել այս դեպքը: Կոնկրետ օրինակը կօգնի աշակերտներին հարցն ավելի լավ իմաստավորել:

Բացի համագործակցությունից, ուսուցիչը կարող է քննարկել նախաձեռնության և կամավորության թեմաները: Նա կարող է հիշեցնել «նախաձեռնության» բացատրությունը:

1 ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Նախաձեռնությունը որևէ գործում նախաձեռնումն է՝ անհրաժեշտ պահին ինքնուրույն ակտիվ գործելու կարողությունը:

- Ինչպե՞ս եք հասկանում «կամավորություն» բառը:
- Տեսա՞ք արդյոք կամավորության օրինակներ Ալբերտ Շվայցերի և Կրեգ Կյելբյուրգերի մասին տրված տեքստերում:

2 ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Կամավորությունը առանց վարձատրության կամավոր աշխատանք է ուրիշի օգտին:

– Ի՞նչ տարբերություն կա նախաձեռնության և կամավորության միջև:

Վերջում ուսուցիչն աշակերտներին տանը հանձնարարում է 2.1 առաջադրանքը: Տնային առաջադրանքը բացատրելիս՝ ուսուցիչը ուշադրությունը պետք է կենտրոնացնի նրա վրա, որ հիմախնդրի մասամբ կարգավորումն էլ գործ է: Օրինակ, տուբերկուլյոզի մասին տեղեկության մատուցումը չի կարող լուծել հիմախնդիրը, սակայն կնպաստի նրա կանխարգելմանը:

Ուսուցիչը պետք է նշի, որ Աշակերտի գրքում կա տեղեկատվություն կազմակերպությունների գործառույթների մասին, և առաջադրանքը կատարելու համար աշակերտները պետք է ծանոթանան այդ տեղեկատվությանը: Բացի այդ, ուսուցիչը պետք է մատնանշի, որ առաջադրանքի կատարումը հեշտացնելու նպատակով նրանք կարող են օգտվել աղյուսակից:

ԲԱՌԱՐԱՆ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
- քաղաքացիների իրավունքների ոտնահարում նրանց սեռի դրդապատճառով:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ/ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ	ԴՊՐՈՑԻ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ	ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ			ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ԿԵՂՏՈՏՎԱԾ ՓՈՂՈՑ								
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ								
ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԾԽԱԽՈՏԻՑ								

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2.1

ա) Ուշադիր ուսումնասիրե՛ք առաջին դասին ձեր կողմից լրացված հիմախնդիրների գծապատկերը:
բ) Ավելացրե՛ք բաց թողնված հիմախնդիրները (եթե որևէ մեկն այդպիսին եք համարում):
գ) Վերանայեք հավելվածներում (1-4) տրված տեղեկատվությունը և պարզեք, թե ինչ տիպի են դրանք: Դա ձեզ կօգնի նախագծի վրա աշխատելիս:
դ) Մտածե՛ք, թե թվարկված հիմախնդիրներից յուրաքանչյուրի վճռմանը որ կազմակերպությունը կարող է մասնակցել: Կարող եք օգտվել ստորև տրված աղյուսակից:
ե) Առանձնացրե՛ք այն հիմախնդիրները, որոնց վճռմանը (կամ նրանց մի մասի վճռմանը) կարող եք մասնակցել: Սա կարող է լինել ոչ թե ամբողջ հիմախնդրի, այլ նրա մի մասի կարգավորումը (հիմախնդիրը կարող է վճռվել դպրոցի մակարդակով, սակայն մեկ չվճռված երկրի մակարդակով):

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինքնակառավարումը հասարակական կառավարման այնպիսի ձև է, որի ժամանակ որոշակի տարածքի բնակիչները ստեղծում են համայնք, որը ճանաչում և որին իրավաբանական կարգավիճակ է շնորհում կենտրոնական իշխանությունը:

Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինը սակրեբուլոն (ավագանին) է, իսկ գործադիր մարմինը՝ գամգեոբան (շրջանային վարչությունը)/քաղաքապետարանը:

Տեղական իշխանությունը պետք է բավարարի բնակչության կարիքները, այլ կերպ ասած՝ կարգավորի տեղական նշանակության հարցեր: Տեղական իշխանությունը բնակչության կենսական պայմանների բարելավման համար պետք է հոգա տարածաշրջանում տնտեսական զարգացման և քաղաքացիական խաղաղության և կայունության ապահովման մասին, նաև ստեղծի էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների համար այնպիսի պայմաններ, որ նրանց տրվի որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն:

Ավելի լիարժեք տեղեկություններ տրված են 2 (1) հավելվածում:

Դպրոցում նույնպես օրենքով նախատեսված է ինքնակառավարման իրականացում: Դպրոցի հոգաբարձուների խորհուրդը և աշակերտների ինքնակառավարումը դպրոցի ինքնակառավարման մարմիններն են: Հոգաբարձուների խորհուրդն ընտրում է դպրոցի տնօրենին, հաստատում դպրոցի բյուջեն և վերահսկում ֆինանսների ծախսը և գույքի տնօրինումը, հաստատում դպրոցի ներքին կարգապահական կանոնները, վերահսկում աշխատանքային պայմանագրերի պայմանների կատարումը: Աշակերտների ինքնակառավարումը կարող է

քննարկել դպրոցի համար նշանակալի հարցեր և ներկայացնել հոգաբարձուների խորհրդին, նրա մեջ առաջարկություններ ընդգրկել՝ կապված դպրոցի ներքին կարգապահական կանոնների հետ, ստեղծել դպրոցական ակումբ: Լիարժեք տեղեկությունները տեսե՛ք 3 (2), 4 (3) և 5 (4) հավելվածներում:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ոչ կառավարական կազմակերպությունը հասարակական կազմակերպություն է, որը հանդիսանում է քաղաքացիների կամավոր միավորում: Նրանում միավորված են ընդհանուր հետաքրքրություններ և նպատակներ ունեցող մարդիկ: Սա կառավարությունից անկախ ինստիտուցիա է: Երբեմն տեղական ոչ կառավարական կազմակերպությունը ֆինանսավորվում է այլ երկրների կառավարությունների կողմից: Աշխարհում շուրջ 40 000 այսպիսի ոչ կառավարական կազմակերպություն կա: Իսկ տեղական նշանակության ոչ կառավարական կազմակերպությունների թիվն ավելի մեծ է:

Ոչ կառավարական կազմակերպությունների տեսակները կարող ենք տարբերակել ըստ ուղղությունների և համագործակցության մակարդակի:

Ըստ ուղղությունների գոյություն ունեն բարեգործական, սպասարկման, ընդհանուր կազմակերպություններ:

Իսկ ըստ համագործակցության մակարդակների՝ համայնքի վրա հիմված, քաղաքային, ազգային, միջազգային:

Ծանոթանանք մի քանի կազմակերպությունների գործառույթներին.

1. ՄԱԿ-ի մանկական հիմադրամ - UNICEF FE (United Nations Children's Fund): Նրա ներկայացուցչությունը Վրաստանում իրականացնում է ծրագրեր երեխաների պաշտպանության, առողջապահության և կրթության բնագավառներում: http://www.unicef.org/georgia
2. ՄԱԿ-ի զարգացման ծրագիր - UNDP (United Nations Development Programme): Սա ՄԱԿ-ի զարգացման ցանց է, որը ծառայում է տարբեր ազգերի բազմակողմանի զարգացմանը: http://www.undp.org.ge

Աշակերտների համար հետաքրքիր կարող են լինել այս կազմակերպության հետևյալ ուղղությունները.

- Environment & Energy - ՄԱԿ-ի «Շրջակա միջավայրը և էներգիան» զարգացման ծրագիրը կոչված է Վրաստանի ջրային ռեսուրսները և միջավայրը աղտոտումից պաշտպանելուն, ինչպես նաև Վրաստանում տեղական

ռեսուրսների օգտագործմանը նպաստելուն և կենսաբազմազանության պահպանմանը:

- Economic Development - ՄԱԿ-ի «Տնտեսական զարգացում» զարգացման ծրագիրը Վրաստանին օգնում է կայուն տնտեսական զարգացման գործում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում երկրում բիզնեսի զարգացմանը և նրանում ցածր եկամուտով մարդկանց խմբերի ընդգրկմանը:

3. Save the Children (Փրկենք երեխաներին) - առաջատար միջազգային կազմակերպություններից մեկն է, որն օգնում է տարբեր երկրների բնակչության խոցելի մասին՝ փողոցի երեխաներին, կանանց, բռնի վերաբնակեցված անձանց: Նրա աշխատանքը միտված է առողջապահության, կրթության, կանանց և երիտասարդների կարիքների հետ կապված հարցերի վճռմանը: http://www.savethechildren.org

4. PH International - միջազգային կազմակերպություն է: Նրա նպատակն է ստեղծել հզոր հասարակություններ՝ քաղաքացիական լիդերության զարգացման, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառության և միջմշակութային հարաբերություններին օժանդակման միջոցով: http://www.ph-int.org

5. USAID (ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալություն) - տարիներ շարունակ USAID-ն օգնում է այն երկրներին, որոնք փորձում են թոթափել աղքատությունը և անցկացնել ժողովրդավարական բարեփոխումներ: Այն իրականացնում է բազմաթիվ ծրագրեր՝ տնտեսական աճի, էներգետիկայի և բնապահպանության, ժողովրդավարության և կառավարման, առողջապահության և սոցիալական զարգացման ուղղություններով: http://www.usaid.gov

6. CENN - Կովկասի բնապահպանական ոչ կառավարական կազմակերպությունների ցանց:

(Caucasus Environmental NGO Network) http://www.cenn.org

Աշակերտները կարող են հետաքրքրվել CENN-ի հետևյալ ուղղություններով.

- Գենդերը և միջավայրը - այս նախագիծը, մի քանի տարի է, ընթանում և հետազոտում է, թե որքանով հաջող են և արդյունավետ գենդերի վրա հիմված նախագծերը, և ինչ դեր ունեն կանայք բնական ռեսուրսների պահպանման և օգտագործման գործում:
- Կլիմայի փոփոխություն - այս նախագիծը նպատակադրում է բարձրացնել Հարավային Կովկասի ժողովուրդների տեղեկացվածությունը այս կարևորագույն

հիմախնդիրներից մեկի մասին, որ այսօր կանգնած է տարածաշրջանի և մարդկության առջև:

- Բնական ռեսուրսների պահպանումը և սպառումը անչափ կարևոր է ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ հասարակության համար: Կազմակերպությունը փորձում է խորհուրդներ տալ այս հարցով հետաքրքրված խմբերին:

7. Վրաստանի երիտասարդ իրավաբանների ընկերակցությունը (ՎԵԻԸ) տեղական նշանակալի կազմակերպություն է, որի բազմակողմանի գործունեության մեջ լուրջ տեղ է զբաղեցնում հասարակության շրջանում իրավական գիտակցության բարձրացումը, օրենքի նկատմամբ հարգանքի հաստատումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, պաշտպանության մեխանիզմների զարգացումը և մատչելիության ապահովումը՝ առանց որևէ խտրականության: http://www.gyla.ge
8. Վրաստանի երիտասարդ տնտեսագետների ընկերակցությունն աշխատում է նպաստել Վրաստանում գործարար միջավայրի բարելավմանը, նաև՝ ժողովրդավարական կառավարմանը, տնտեսական բարեփոխումներին և երիտասարդ տնտեսագետների մասնագիտական զարգացմանը: http://www.economists.ge

Ստորև տրված են ինտերնետ-հասցեները, որտեղ կարելի է տեղեկություններ հայթայթել ոչ կառավարական կազմակերպությունների և հիմադրամների մասին.

- Ոչ կառավարական կազմակերպությունների և հիմադրամների մասին տեղեկություններն ամփոփված են http://www.afba.ge կայք-էջում: Մենյուի մեջ դեռ պետք է գտնեք հղումները, այնուհետև՝ ոչ կառավարական կազմակերպությունները:
- Հասարակական ոչ կառավարական կազմակերպություններ և հիմադրամներ՝ http://www.yell.ge:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ակումբը ընդհանուր հասարակական հետաքրքրություններ կամ նպատակներ ունեցող մարդկանց կամավոր միավորում է: Ակումբները կարող են լինել տարբեր ուղղությունների՝ մարզական, երաժշտական, կրոնական, քաղաքացիական, հասարակական գործունեության, բարեգործական գործունեության և այլն: Հնագույն ժամանակներից ի վեր ակումբներ գոյություն ունեն բոլոր երկրներում: Աշխարհի տարբեր երկրներում շատ տարածված է

դպրոցական ակումբների հիմնադրման փորձը: Ակումբը պետք է ունենա անվանում, կանոնադրություն, գործողությունների պլան, հոգաբարձու: Հոգաբարձուն առավելապես ուսուցիչ է, որն ակումբի աշխատողներին օգնում է աշխատանքի կատարման մեջ: Եվրոպայի շատ երկրներում գործում են դպրոցի եվրոպական ակումբներ: Այսպիսի ակումբ կա նաև Բաթումիի 2-րդ հանրային դպրոցում: Սա միասին աշխատող աշակերտների թիմ է, որի անդամները խորացնում են իրենց գիտելիքը Եվրոպայի պատմությունից, աշխարհագրությունից, ավանդույթներից և մշակույթից, մասսայականացնում այդ գիտելիքը դպրոցում և տեղական համայնքում: Օրինակի համար ծանոթացե՛ք այսպիսի ակումբներից մեկի կանոնադրությանը (հավելված 5 (4)):

Ի տարբերություն նախագծի, ակումբներն ավելի երկարատև համագործակցություն են ենթադրում: Ակումբը երկարաժամկետ միավորում է, որի կազմը կարող է փոխվել, սակայն աշխատանքի հիմնական ուղղությունները մնում են անփոփոխ: Օրինակ՝ բարեգործական ակումբը կարող է գոյություն ունենալ տարիներ շարունակ, քանի որ մեր շուրջ միշտ կան մարդիկ, որոնց օգնություն է անհրաժեշտ:

Այստեղ առաջարկում ենք նաև հասարակական օգուտ բերող մի քանի երկարաժամկետ նախագծի գաղափար և արդեն առկա ակումբների ակտիվությունների նկարագիր:

Դպրոցական քաղաքացիական ակումբ - ՀԻԻԴ Ռուսթավիի №2 դպրոցի քաղաքացիական ակումբը հիմնադրվել է 2010 թվականին, ԿՆՎԸ (Կրթական նախաձեռնությունների վրացական ընկերակցություն) անվանմամբ: Այն ղեկավարում են քաղաքացիական կրթության ուսուցիչները: Ակումբի անդամ են իններորդ և տասներորդ դասարանների շուրջ 40 աշակերտներ: Ակումբը պլանավորում է և իրականացնում տարբեր տիպի նախագծեր և ակտիվություններ: Օրինակ, առողջ կենսակերպի ժողովրդականացման նպատակով, ակումբը երեկույթ էր կազմակերպել, որտեղ աշակերտների հետ հանդիպել է և նրանց հետ զրուցել խառը մարտաձևերից աշխարհի չեմպիոն Գուրամ Գուգենիշվիլին: Այժմ ակումբի անդամներն ընդգրկված են ԿՆՎԸ-ի փոքր դրամաշնորհների մրցույթի մեջ և նախագծեր են պատրաստում:

Գիվի Զալդաստանիշվիլիի անվան Թբիլիսիի ամերիկյան ակադեմիայում 2001 թվականից գոյություն ունի բարեգործական ակումբ: Այս ակումբի հոգաբարձուն վրաց լեզվի և գրականության ուսուցիչն է: Ներկայիս դրությամբ բարեգործական ակումբում շուրջ 40 անդամ է միավորված: Սկզբից ընդամենը մի քանի աշակերտ էր գնում մանկատներ և տարեցների ապաստաններ, վանքեր և նրանց բնակիչներին օգնում ամենօրյա գործունեության մեջ: Ուսուցիչը լուսանկարում էր և դրանք ամեն երկուշաբթի ցուցադրում միջանցքներում: Հետաքրքրվող աշակերտների քանակն աստիճանաբար աճեց, և ակումբն էլ ընդլայնվեց:

Կանաչ ակումբ - այս ակումբի անդամները կարող են

գտնել ազատ հողամասեր, համաձայնության գալ տեղական ինքնակառավարման հետ և կանաչապատել հողամասը, համագործակցել քաղաքի/գյուղի կառուցապատման ծառայության ներկայացուցիչների հետ (զբոսայգիների, այգիների պլանավորում), մաքրել ճանապարհները (ճանապարհի կամ ճանապարհահատվածի ընտրություն և կարգավորում) և այլն:

Մշակութային ժառանգության ակումբ - այս ակումբի անդամները կարող են իրենց գյուղում/թաղամասում/երկրամասում գտնել պատմական հուշարձան(ներ), մաքրել (մասնագետների դիտորդությամբ), նրա մասին տեղեկություններ հայթայթել, կազմել բուկլետ կամ կայք-էջ, իրենց շուրջ համախմբել համախոհների և կազմակերպություններ, համագործակցել պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ՝ պատմական հուշարձանների մասին տեղեկությունների հայթայթման, տարածման և այս հուշարձանների մասին հոգածության նպատակով: Այսպիսի ակումբ է ստեղծված Թբիլիսիի 42-րդ հանրային դպրոցում:

Երեխաների իրավունքների պաշտպանության ակումբ - այս ակումբի անդամները կարող են բացատրել երեխաներին իրենց իրավունքները, գտնել այն ոչ կառավարական կամ կառավարական կազմակերպությունները, որոնք աշխատում են երեխաների իրավունքների պաշտպանության վրա, և երեխաներին տեղեկություններ մատուցել այս կազմակերպությունների գործունեության մասին, իրավունքների խախտման դեպքում օգնություն ցուցաբերել երեխաներին, որպեսզի նրանք իրենց ձայնը հասցնեն համապատասխան կազմակերպություններին, երեխաների պաշտպանության ապահովման համար մոբիլիզացնել մարդկային և կազմակերպչական ռեսուրսներ, հնարավորություն տալ երեխաներին ակտիվ մասնակցելու սեփական իրավունքների պաշտպանությանը:

Դպրոցի ռադիոգիծ/թեժ գիծ - այս ակումբի անդամները կարող են կազմակերպել և վարել դպրոցի ռադիոգիծ: Ռադիոհաղորդումներում կարելի է խոսել երեխաների համար հրատապ խնդիրների և աշակերտների կողմից իրականացված նախագծերի մասին՝ նրանց մասսայականացման նպատակով:

Հոգ ենք տանում դպրոցի մասին - մարզական կահավորանքի հայթայթում և դպրոցական դահլիճի բարեկարգում, մարզահրապարակի կազմակերպում, գրադարանի հարստացում և կարգավորում, բակի խնամք, մաքրության պահպանում և այլն: Այս գաղափարը հնարավոր է իրականացնել ինչպես մեկանգամյա նախագծի, այնպես էլ մշտապես գործող ակումբի ստեղծման միջոցով:

Գրագիտության տարածումը այսօր հրատապ հարց է Վրաստանում: Այստեղ էլ կարելի է իրականացնել ինչպես մեկանգամյա միջոցառում, այնպես էլ երկարաժամկետ նախագիծ կամ ակումբային աշխատանք ծավալել՝ մի քանի տարի առաջ սահմանված պլանով և նպատակներով:

Այս գաղափարին է արձագանքում Կրթության և գիտության նախարարության կողմից նախաձեռնված «Գրքի բարեկամ» նախագիծը: Նախագծի նպատակն է զարգացնել երեխաների կարդալու, լսելու և կարդացածը իմաստավորելու կարողությունները, նպաստել գրագիտությանը և ընթերցանության մասսայականացմանը: Ըստ նախագծի հայեցակարգի՝ ավագ դասարանցիները, ուսանողները, գրողները, անվանի մարդիկ և այլ կամավորներ կրտսեր դասարանցիների համար ընթերցում են արտադասարանական գրականությունից հատվածներ, ինչից հետո ծավալվում է մտքերի փոխանակում ընթերցած նյութի շուրջ: Նման նախագիծ իրականացվում է բազմաթիվ երկրներում, և նրա մեջ ընդգրկված են բազմաթիվ մարդիկ:

Կերակուրների բարեգործական տոնավաճառ - այս գաղափարի իրականացման համար կարող եք պլանավորել հետևյալ ակտիվությունները. ազգային խոհանոցների արտադրանքի մրցույթ և վաճառք խառը ազգային կազմով դպրոցներում, լավագույն բաղադրատոմսերի բացահայտում և փոխանակում և այլն: Տոնավաճառից հավաքված հասույթը կարող է օգտագործվել դպրոցների կամ սոցիալապես անապահով աշակերտների համար:

Ծանոթանանք մեզ պաշտպանողների հետ - աշակերտներին՝ ոստիկանության և հրշեջ ծառայության հետ ծանոթացում, փոքրիկների համար անվտանգության կանոնների մասին շնորհանդեսների կազմակերպում, դպրոցներում տարհանման պլանների կազմում և այլն: Այսպիսի գաղափարների իրականացումը հնարավոր չէ մեկանգամյա նախագծերով:

Գրաֆիտ - պատերի սպիտակեցում կամ մակագրությունների լվացում, հոգածություն գեղագիտական կողմի մասին:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ - ԳՈՐԾԸՆԿԵՐ

Տարբեր կազմակերպությունների գործունեությանը ծանոթանալուց հետո, գործընկեր ընտրելու համար նախօրոք պետք է սահմանել, թե ինչ մակարդակի հիմախնդիր եք փորձում լուծել:

Հիմախնդիրները պայմանականորեն կարելի է բաշխել հետևյալ սխեմայի մեջ. հիմախնդիրներ ընտանիքում, դպրոցում, քաղաքում, սեփական երկրում, օտար երկրում, գլոբալ հիմախնդիրներ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ 1

(քաղվածք)

ՀՈԴՎԱԾ 1.

Օրենքի գործելու ոլորտը

Այս օրենքը որոշում է տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմքերը, տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, դրանց ստեղծման և գործունեության կարգերը, դրանց ֆինանսները և գույքը, հարաբերությունները քաղաքացիների, պետական իշխանության մարմինների, հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ, նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վրա պետական վերահսկողության և ուղղակի պետական կառավարման իրականացման կարգերը:

ՀՈԴՎԱԾ 2.

Տեղական ինքնակառավարման հասկացություն

1. Տեղական ինքնակառավարումն ինքնավար միավորում գրանցված Վրաստանի քաղաքացիների կողմից ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, Վրաստանի օրենսդրության հիման վրա տեղական նշանակության հարցեր որոշելու իրավունքը և հնարավորությունն է:
2. Ինքնավար միավորը մունիցիպալիտետն է: Մունիցիպալիտետը բնակավայր է (ինքնավար քաղաք), որն ունի վարչական սահմաններ կամ բնակավայրերի միություն (ինքնավար համայնք), վարչական սահմաններ և վարչական կենտրոն, ընտրովի տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմիններ (մունիցիպալիտետի մարմիններ), սեփական գույք, բյուջե, եկամուտներ: Մունիցիպալիտետն անկախ հանրային իրավասության իրավաբանական անձ է:

ՀՈԴՎԱԾ 3.

Մունիցիպալիտետ՝ ինքնավար քաղաք և ինքնավար համայնք

1. Տեղական ինքնակառավարումն իրականացվում է մունիցիպալիտետում՝ ինքնավար քաղաքում և ինքնավար համայնքում:
2. Քաղաքը քաղաքատիպ բնակավայր է, որին, այս օրենքի համապատասխան, շնորհված է կամ շնորհվում է մունիցիպալիտետի կարգավիճակ:
3. Ինքնավար համայնքը մի քանի բնակավայրի միավոր է, որին, այս օրենքի համաձայն, շնորհված է կամ շնորհվում է մունիցիպալիտետի կարգավիճակ:

ՀՈԴՎԱԾ 4.

Բնակչության բնակեցման առաջնային տարածքային միավոր և մունիցիպալիտետի վարչական միավոր

1. Բնակչության բնակեցման առաջնային տարածքային միավորը բնակավայր է, որն

1. Օրենքն ամբողջությամբ նայել https://matsne.gov.ge/index.php?option=com_ldmssearch&view=docView&id=2244429&lang=ge կայքում

ունի անվանում, վարչական սահմաններ, տարածք և ունի գրանցված բնակչություն: Բնակավայրի տեսակներն են՝

ա) Գյուղ - բնակավայր, որի սահմաններում հիմնականում գյուղատնտեսական նշանակության հողեր և այլ բնական ռեսուրսներ են, և ենթակառույցն էապես կողմնորոշված է գյուղատնտեսական գործունեություն իրականացնելուն:

բ) Ավան - բնակավայր, որի տարածքում կան արդյունաբերական ձեռնարկություններ կամ/և զբոսաշրջային և հանգստավայրային հաստատություններ կամ/և բուժիչ և սոցիալ-մշակութային հաստատաություններ, որոնք էլ իրականացնում են տեղական տնտեսական/մշակութային կենտրոնի գործառույթները: Ավանի ենթակառուցվածքն էապես կողմնորոշված չէ գյուղատնտեսական գործունեություն վարելուն: Ավանի կարգի բնակավայրերին հնարավոր է պատկանի բնակավայրը, եթե այն ինքնավար միավորի վարչական կենտրոն է կամ ունի տնտեսական զարգացման և բնակչության աճի հեռանկար:

գ) Քաղաք - բնակավայր, որի տարածքի վրա տեղակայված են արդյունաբերական ձեռնարկություններ և տուրիստական, բժշկական և սոցիալ-մշակութային հիմարկների ցանց, որոնք իրագործում են տեղական տնտեսական, մշակութային կենտրոնի գործառույթները: Քաղաքի ենթակառույցները կողմնորոշված չեն գյուղատնտեսական գործունեության իրականացմանը: Քաղաքի կարգին կարող է պատկանել բնակավայրը, որի գրանցված բնակիչների քանակը 5000-ից ավել է: Բնակավայրին, որի գրանցված բնակիչների քանակը 5000-ից պակաս է, կարելի է քաղաքի կարգավիճակ շնորհել, եթե այն ինքնավար միավոր, վարչական կենտրոն է կամ ունի հետագայում տնտեսական զարգացման և բնակչության աճի հեռանկար կամ էլ այս օրենքի երրորդ հոդվածի երկրորդ կետի համաձայն, որոշված է որպես ինքնավար քաղաք...

ՀՈԴՎԱԾ 6.

Վրաստանի քաղաքացիների կողմից տեղական ինքնակառավարման իրականացման իրավունքը

1. Վրաստանի քաղաքացիները տեղական ինքնակառավարումն իրականացնում են Վրաստանի Սահմանադրության «Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի», Վրաստանի միջազգային պայմանագրերի և համաձայնությունների, այս օրենքի և Վրաստանի այլ նորմատիվ ակտերի համապատասխան:

2. Վրաստանի քաղաքացիներն ունեն իրավունք, այս օրենքով և ընտրական օրենսդրությամբ որոշված կարգով ընտրել տեղական ինքնակառավարման մարմիններ և ընտրված լինել այդ մարմիններում՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, կրոնական, քաղաքական և այլ հայացքներից, ազգային և սոցիալական պատկանելությունից, ծագման, գույքային և կոչման վիճակից...

ՀՈԴՎԱԾ 8.

Մունիցիպալիտետի խորհրդանիշերը

1. Մունիցիպալիտետն ունի գերբ (զինանշան) և դրոշ: Նա կարող է ունենալ նաև այլ խորհրդանիշեր...

ՀՈԴՎԱԾ 23.

Մունիցիպալիտետի Սակրեբուլո

1. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմին է կոլեգիալ վարչական մարմինը՝ մունիցիպալիտետի Սակրեբուլոն:
2. Մունիցիպալիտետի Սակրեբուլոն ընտրվում է չորս տարվա ժամկետով, մունիցիպալիտետի տարածքում գրանցված Վրաստանի քաղաքացիների կողմից, ուղղակի ընտրություններով, համընդհանուր, հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:
3. Մունիցիպալիտետի Սակրեբուլոյի անդամների քանակը և ընտրության կարգը որոշվում է «Վրաստանի Ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով:

ՀԱՎԵԼՎԱԾ 3 (2)

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(քաղվածք)

ԳԼՈՒԽ VII

Հանրակրթական հաստատության հոգաբարձուների խորհուրդը

ՀՈԴՎԱԾ 37. **Հոգաբարձուների խորհուրդ**

1. Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է ծնողների և մանկավարժական խորհրդի կողմից հավասար քանակությամբ, 3 տարով ընտրված ոչ պակաս քան 6 և ոչ ավել, քան 12 ներկայացուցչից, միջնակարգ աստիճանի աշակերտների ինքնակառավարման կողմից ընտրված 1 ներկայացուցչից և Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից նշանակված 1 անդամից, իսկ այն հանրակրթական հաստատությունում, որն իրականացնում է զինվորական նախապատրաստում և կրթություն, նաև Վրաստանի պաշտպանության նախարարության կողմից նշանակված 1 անդամից: Տեղական ինքնակառավարման մարմինն իրավազոր է հոգաբարձուների խորհրդում նշանակել 1 անդամ: Հոգաբարձուների խորհրդի կազմի մեջ կարող է ընդգրկվել հոգաբարձուների խորհրդի կողմից դպրոցին հաստատված բարեգործություն ցուցաբերող անձանցից (այսպիսիների գոյության դեպքում) ընտրված 1 անդամ: Հոգաբարձուների խորհրդի անդամների քանակը սահմանելիս՝ փոքրաքանակ դպրոցների համար կարելի է բացառություն թույլ տալ՝ Վրաստանի կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ: Ծնողներից ընտրված անդամները հավասարապես պետք է ներկայացնեն դպրոցում առկա յուրաքանչյուր աստիճանը: Հոգաբարձուների խորհրդի անդամը կարող է ընտրվել անընդմեջ միայն երկու անգամ: (16.07.2010. N3442)

2. Հոգաբարձուների խորհրդի ծնողներից և մանկխորհրդից ընտրված անդամների քանակը սահմանվում է դպրոցի կանոնադրությամբ:

3. Վրաստանի կրթության և գիտության նախարարությունն իրավունք ունի իր ներկայացուցչին ուղարկել հոգաբարձուների խորհուրդ, որն օգտվում է խորհրդակցական ձայնի իրավունքից:

4. Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինն իրավունք ունեն ցանկացած ժամանակ ետ կանչել իրենց ներկայացուցչին հոգաբարձուների խորհրդից:

5. Հոգաբարձուների խորհուրդը ղեկավարում է նախագահը, որը հրավիրում է և վարում խորհրդի նիստերը: Նա ներկայացնում է դպրոցը տնօրենի հետ հարաբերություններում: Խորհրդի նախագահը հերթականությամբ ընտրվում է խորհրդի կազմի մեջ ծնողներից և մանկխորհրդից ընտրված անդամներից և տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի ներկայացուցչից, ոչ ավել, քան նրա իրավազորության ժամկետով: Հոգաբարձուների խորհրդի անդամ աշակերտների ինքնակառավարման ներկայացուցիչը չի կարող ընտրվել հոգաբարձուների խորհրդի նախագահ: (19.03.2008. N5951)

5[1]. Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու իրավազորություն ունի հոգաբարձուների խորհրդի ցուցակային կազմի առնվազն մեկ երրորդը, կամ հոգաբարձուների խորհրդում սույն օրենքի 26-րդ հոդվածի առաջին կետի «Իվ» ենթակետով նախատեսված, Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից նշանակված ներկայացուցիչը: Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստին խորհրդի նախագահի բացակայության դեպքում հոգաբարձուների խորհուրդն իրավազոր է ցուցակային կազմի մեծամասնությամբ ընտրել նիստի նախագահ, որն այս արտահերթ նիստին իրականացնում է հոգաբարձուների խորհրդի նախագահի

իրավազորություններ: (11.07.2009. N1385)
6. Ձայների հավասար բաշխման դեպքում վճռական է հոգաբարձուների խորհրդի նախագահի ձայնը:
7. Հոգաբարձուների խորհրդի նիստը ուսումնական տարվա ընթացքում գումարվում է առնվազն 3 անգամ, յուրաքանչյուր երրորդ մասի սկզբում:

ՀՈԴՎԱԾ 38. **Հոգաբարձուների խորհրդի գործառույթները**
1. Հոգաբարձուների խորհուրդը.
ա) Սույն օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված կարգով, ցուցակային կազմի մեծամասնությամբ, ընտրում է դպրոցի տնօրեն, որին գրանցում է Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը: Այս օրենքը չի տարածվում այն հանրակրթական հաստատության վրա, որն իրականացնում է զինվորական նախապատրաստում և կրթություն: (4.05.2010 N3068)
բ) Դպրոցի տնօրենի ներկայացմամբ, հաստատում է տնօրենի կողմից պատրաստված դպրոցի բյուջեն, նաև հաստատում է տնօրենի կողմից պատրաստված տարվա հաշվետվությունը և ապահովում նրա հանրայնությունը: Այն հանրակրթական հաստատության բյուջեն, որն իրականացնում է զինվորական նախապատրաստում և կրթություն, հաստատում է Վրաստանի պաշտպանության նախարարությունը, իսկ բյուջեի նախագիծը կազմում են այս հաստատության տնօրենը և հոգաբարձուների խորհուրդը: (4.05.2010N3068)
գ) Դպրոցի տնօրենի ներկայացմամբ, հաստատում է դպրոցի ներքին կարգապահական կանոնները, որոնք սպառիչ սահմանում են կարգապահական խախտումների ցանկը և դրանց համար նախատեսված կարգապահական պատիժները, դպրոցից տեղափոխման պայմանները:
դ) Արտահայտում է համաձայնություն մանկավարժական խորհրդի կողմից մշակած դպրոցական ուսումնական ծրագրի (պլանի), ուսումնական նյութի, այդ թվում գրիֆ շնորհված, մանկավարժների կողմից ընտրած, ուսումնական տարվա ընթացքում կիրառվող դասագրքերի ցուցակի մասին: 25.11.2011. N 5349:
ե) Վերահսկում է դպրոցի տնօրինության կողմից ֆինանսների ծախսումը և գույքի տնօրինումը:
զ) Իրավազոր է աշխատանքային պայմանագրով և Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված պահանջների խախտման դեպքում խզել դպրոցի տնօրենի պայմանագիրը:
է) Պահում է և հաշվառում հոգաբարձուների խորհրդում ծնողների և մանկխորհրդի ներկայացուցիչների ընտրությունների քվեաթերթիկները և արձանագրությունները:
ը) Դպրոցի կանոնադրությամբ նախատեսված կարգով քննարկում է բողոքները և ձեռնարկում համապատասխան միջոցներ:
թ) Իրավասու է, ազգային ուսումնական ծրագրի (պլանի) համաձայն, ուսումնական տարվա ավարտական քննությունների անցկացման նպատակով պարտավորեցնել դպրոցի տնօրենին դիմել հանրային իրավասության իրավաբանական անձին՝ գնահատման և քննությունների ազգային կենտրոն և կնքել համապատասխան պայմանագիր: (06.08.2013. N 918)
ժ) Իրավազոր է դպրոցի տնօրենից պահանջել վաղաժամկետ դադարեցնել ուսուցչի աշխատանքային պայմանագիրը՝ պայմանագրի պայմանների խախտման, դաստիարակչական գործունեությանն անհարիր արարքի և օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:
ժա) Կարգապահական խախտումների քննարկման նպատակով, դպրոցի կանոնադրությամբ նախատեսված կարգով ընտրում է կարգապահական կոմիտե, որի կազմի մեջ մտնում են հավասար քանակությամբ ուսուցիչներ, ծնողներ և միջնակարգ աստիճանի աշակերտ: Հոգաբարձուների խորհուրդն իրավազոր է կանոնադրությամբ նախատեսված կարգով կարգապահական կոմիտեի

որոշումների մասին բողոքներն ինքը քննարկել կամ ստեղծել բողոքարկման կոմիտե: Հոգաբարձուների խորհուրդը քննարկում է նաև այն բողոքները, որոնք վերաբերում են տնօրենի կողմից կարգապահական խախտումների համար կայացրած որոշումներին: Թույլ չի տրվում կարգապահական կոմիտեի կամ բողոքարկման կոմիտեի հատուկ կազմ հրավիրել կոնկրետ դեպքի քննարկման նպատակով:
ժբ) Համաձայնեցնում է դպրոցի տնօրենի կողմից ներկայացված դպրոցի կանոնադրության նախագիծը:
2. Սույն հոդվածի առաջին կետի «ա», «բ», «գ», «դ», «ժ», «ժա» ենթակետերով նախատեսված որոշումները հոգաբարձուների խորհուրդն ընդունում է ցուցակային կազմի մեծամասնությամբ, իսկ «զ» ենթակետով նախատեսված որոշումը՝ ցուցակային կազմի երկու երրորդով:
3. Սույն հոդվածի առաջին կետի «ա», «բ» (բացի տարեկան հաշվետվության հետ կապված գործառույթներից և «բ» ենթակետի երկրորդ նախադասությունից) և «զ» ենթակետերի գործողությունը չի տարածվում այն հանրակրթական հաստատությունների վրա, որոնք իրականացնում են զինվորական նախապատրաստում և կրթություն:
(4.05.2010 N3068)

ԳԼՈՒԽ X

Հանրակրթական հաստատության աշակերտների ինքնակառավարումը

ՀՈԴՎԱԾ 47. **Աշակերտների ինքնակառավարումը**

1. Աշակերտների ինքնակառավարումը սույն օրենքի և կանոնադրության համաձայն ընտրված մարմին է: Այն դպրոցի կառուցվածքային միավոր է հանդիսանում:
2. Հիմական և միջնակարգ աստիճանների աշակերտներն ընտրում են իրենց ինքնակառավարումները:
3. Աշակերտների ինքնակառավարումների ընտրություններն անց են կացվում հավասարության հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, թափանցիկության և դասարանների համաձայն՝ աշակերտների հավասար ներկայացուցչության սկզբունքների պահպանմամբ:
4. Աշակերտների ինքնակառավարումը ղեկավարում է ինքնակառավարման կողմից ընտրված նախագահը:

ՀՈԴՎԱԾ 48. **Աշակերտների ինքնակառավարման գործառույթները**

Աշակերտների ինքնակառավարումը.
ա) կազմում է երաշխավորություններ դպրոցի ներքին կարգապահական կանոնների մասին,
բ) իրավազոր է հոգաբարձուների խորհրդին առաջարկություններ ներկայացնել՝ կապված դպրոցի համար նշանակալի բոլոր հարցերի հետ,
գ) ընտրում է իր ներկայացուցչին հոգաբարձուների խորհրդում,
դ) դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով և Վրաստանի օրենսդրության համապատասխան, մասնակցում է ձեռք բերված դրամաշնորհի տնօրինմանը,
ե) անդամների մեկ հինգերորդի նախաձեռնությամբ ստեղծում է դպրոցական ակումբներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(քաղվածք)

ՀՈԴՎԱԾ 4. **Հոգաբարձուական խորհուրդ**

1. Հոգաբարձուական խորհուրդը կազմվում է ծնողներից և մանկավարժական խորհրդից՝ հավասար քանակությամբ, 3 տարով ընտրված 6-ից ոչ պակաս և 12-ից ոչ ավել ներկայացուցչից, միջին աստիճանի աշակերտների ինքնակառավարման կողմից ընտրված մեկ ներկայացուցչից և նախարարության կողմից նշանակված մեկ անդամից, տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու է հոգաբարձուական խորհրդում նշանակել մեկ անդամ: Հոգաբարձուական խորհրդի կազմում հնարավոր է մտցնել հոգաբարձուական խորհրդի կողմից դպրոցի համար բարեգործություն անող (ճշգրտված) անձանցից ընտրված մեկ անդամ (այդպիսին լինելու դեպքում): Հոգաբարձուական խորհրդի անդամների քանակը որոշելիս փոքրաքանակ դպրոցների համար բացառություն կարելի է թույլ տալ միայն նախարարության համաձայնությամբ: Ծնողներից ընտրված անդամները հավասար պետք է ներկայացնեն դպրոցում առկա յուրաքանչյուր աստիճան: Հոգաբարձուական խորհրդի անդամը ընտրված կարող է լինել անընդմեջ ընդամենը երկու անգամ:

2. Նախարարությունը իրավունք ունի ներկայացուցիչ ուղարկել հոգաբարձուական խորհուրդ, որն էլ կունենա ժողովի ձայնի իրավունք:

3. Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինն իրավունք ունեն ցանկացած ժամանակ ետ կանչել իրենց ներկայացուցչին հոգաբարձուական խորհրդից:

4. Հոգաբարձուական խորհուրդը ղեկավարում է խորհրդի նախագահը, որը հրավիրում և վարում է խորհրդի նիստերը: Նա ներկայացնում է դպրոցը տնօրենի հետ հարաբերություններում: Խորհրդի նախագահը փոխարինաբար ընտրվում է խորհրդի կազմում ծնողներից և մանկավարժական խորհրդից ընտրված անդամներից և տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի ներկայացուցչից, նրանց իրավասության ժամկետից ոչ ավել: Աշակերտների ինքնակառավարման ներկայացուցիչ խորհրդի անդամը չի կարող ընտրված լինել որպես հոգաբարձուական խորհրդի նախագահ:

5. Հոգաբարձուական խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու իրավասություն ունի հոգաբարձուական խորհրդի, ցուցակային կազմի ոչ պակաս, քան մեկ երրորդը կամ հոգաբարձուական խորհրդում, «Ընդհանուր կրթության մասին» Վրաստանի օրենքի 26-րդ հոդվածի առաջին կետի «չ» ենթակետով նախատեսած, նախարարության կողմից նշանակված ներկայացուցիչը: Հոգաբարձուական խորհրդի արտահերթ նիստին խորհրդի նախագահի բացակայության դեպքում հոգաբարձուական խորհուրդը իրավասու է ցուցակային կազմի մեծամասնությամբ ընտրել նիստի նախագահ, որն այդ արտահերթ նիստին իրականացնում է հոգաբարձուական խորհրդի նախագահի իրավասությունները:

6. Ձայների հավասար բաշխման դեպքում որոշիչ է հոգաբարձուական խորհրդի նախագահի ձայնը:

7. Հոգաբարձուական խորհուրդը հավաքվում է ուսումնական տարվա ընթացքում առնվազն երեք անգամ, յուրաքանչյուր եռամսյակի սկզբին:

ՀՈԴՎԱԾ 5. **Հոգաբարձուական խորհրդի գործառույթները**

1. Հոգաբարձուական խորհուրդը՝

ա) «Ընդհանուր կրթության մասին» Վրաստանի օրենքի 42-րդ հոդվածով նախատեսած կարգով, ցուցակային կազմի մեծամասնությամբ ընտրում է դպրոցի տնօրեն, որին էլ գրանցում է հանրային իրավասության իրավաբանական անձը՝ Կրթության կառավարման լրատվական համակարգը,

բ) դպրոցի տնօրենի ներկայացմամբ հաստատում է դպրոցի բյուջեն, նաև

հաստատում է տնօրենի կողմից պատրաստած տարեկան հաշվետվությունը և ապահովում նրա հանրայնությունը,
գ) դպրոցի տնօրենի ներկայացմամբ հաստատում է դպրոցի ներքին կարգապահությունը, որը սպառիչ կերպով սահմանում է կարգապահական թերացումների ցուցակը և դրանց համար նախատեսած կարգապահական պատժամիջոցները, դպրոցից տեղափոխման պայմանները,
դ) համաձայնեցնում է մանկխորհրդի կողմից մշակած դպրոցական ուսումնական ծրագրի (պլանի), ուսումնական նյութի, այդ թվում, Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից գրիֆ շնորհված, մանկավարժների կողմից ընտրված, ուսումնական տարվա ընթացքում կիրառվող դասագրքերի ցուցակը/ցանկը,
ե) վերահսկում է դպրոցի տնօրինության կողմից ֆինանսների ծախսումը և գույքի տնօրինումը,
զ) իրավասու է աշխատանքային պայմանագրով և Վրաստանի կանոնադրությամբ նախատեսած պահանջների խախտման դեպքում դադարեցնել դպրոցի տնօրենի հետ պայմանագիրը,
է) պահում է և հաշվառում հոգաբարձուական խորհրդում ծնողների և մանկավարժական խորհրդի ներկայացուցիչների ընտրության քվեաթերթերը և արձանագրությունները,
ը) քննարկում է հայցերը և համապատասխան միջոցներ ձեռնարկում,
թ) Ազգային ուսումնական պլանի համաձայն՝ իրավասու է ուսումնական տարվա ավարտական քննությունների անցկացման նպատակով պարտավորեցնել տնօրենին, դիմել Գնահատման և քննությունների ազգային կենտրոն և կնքել համապատասխան պայմանագիր,
ժ) ուսուցչի պայմանագրի պայմանները խախտելու դեպքում իրավասու է պահանջել դպրոցի տնօրենից ժամկետից շուտ դադարեցնել աշխատանքային պայմանագիրը, դաստիարակչական գործունեության համար անհամատեղելի արարքների և օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում,
ի) կարգապահական թերացումների քննարկման նպատակով ընտրում է կարգապահական կոմիտե, որի կազմի մեջ մտնում է հավասար քանակության ուսուցիչ, ծնող և միջին աստիճանում սովորող աշակերտ: Հոգաբարձուական խորհուրդը իրավասու է կանոնադրությամբ սահմանված կարգով կարգապահական կոմիտեի որոշումների մասին բողոքներն անձամբ քննարկել կամ ստեղծել բողոքարկող կոմիտե: Բողոքարկող կոմիտեն, հոգաբարձուական խորհուրդը քննարկում են նաև բողոքներ, որոնք վերաբերում են տնօրենի կողմից կարգապահական թերացումների շուրջ ընդունած որոշումներին: Անթույլատրելի է կարգապահական կոմիտեի կամ բողոքարկող կոմիտեի հատուկ կազմի հրավեր՝ կոնկրետ դեպքի քննարկման նպատակով,
լ) համաձայնեցնում է տնօրենի կողմից ներկայացրած դպրոցի կանոնադրության նախագիծը:
2. Այս հոդվածի առաջին կետի «ա»,«բ»,«գ»,«դ»,«ժ» և «լ» ենթակետերով նախատեսած որոշումները հոգաբարձուական խորհուրդը ընդունում է ցուցակային կազմի մեծամասնությամբ, իսկ «զ» ենթակետով նախատեսած որոշումը՝ ցուցակային կազմի երկու երրորդով:

ՀՈԴԱԾ 10. **Աշակերտների ինքնակառավարումը**

1.Աշակերտների ինքնակառավարումն աշակերտների ընտրովի մարմին է, որը հանդիսանում է դպրոցի կառուցվածքային միավոր:
2. Բազային և միջին աստիճանի աշակերտներն ընտրում են իրենց ինքնակառավարումները:
3. Աշակերտներն իրենց ներկայացուցիչներին ինքնակառավարման մեջ ընտրում են հավասարության հիմունքով, գաղտնի քվեարկությամբ, պահպանելով դասարանների հավասար ներկայացուցչական սկզբունքը՝ հետևյալ կարգով.
ա) բազային և միջին աստիճանի աշակերտների ինքնակառավարման

ընտրություններն անցկացվում են ուսումնական տարվա սկզբում, մեկ ամիս ժամկետում,
բ) աշակերտների ինքնակառավարման ընտրությունների անցկացման ամսաթիվը նշանակում է հոգաբարձուական խորհրդի նախագահը,
գ) բազային և միջին աստիճանների աշակերտներն ինքնակառավարման մեջ յուրաքանչյուր դասարանի աշակերտներից ընտրում են մեկական ներկայացուցիչ, մինչև հաջորդ ուսումնական տարում հոգաբարձուական խորհրդի կողմից աշակերտների համապատասխան ինքնակառավարման նոր ընտրությունների անցկացումը,
դ) բազային և միջին աստիճանի աշակերտների ինքնակառավարման ընտրություններում մասնակցելու իրավունք ունի, համապատասխանաբար, բազային և միջին աստիճանի յուրաքանչյուր աշակերտ,
ե) բազային և միջին աստիճանների յուրաքանչյուր դասարանի աշակերտ քվեարկում է մեկ թեկնածուի օգտին, համապատասխանաբար, բազային կամ միջին աստիճանի աշակերտների ինքնակառավարման մեջ ընտրվելու համար: Հաղթող է ճանաչվում այն աշակերտը, ով համապատասխան դասարանում հավաքում է ձայների մեծամասնությունը,
զ) դպրոցներում, որտեղ բազային կամ միջին աստիճանում (յուրաքանչյուրում) դասարանների քանակը չի գերազանցում երեքը, յուրաքանչյուր դասարանի աշակերտ ձայնը տալիս է երեք թեկնածուի օգտին՝ համապատասխան աստիճանի ինքնակառավարման մեջ ընտրվելու համար: Այս դեպքում հաղթող կճանաչվի դասարանում ձայների առավելագույն քանակ ունեցող երեք թեկնածու,
է) այն աշակերտները, ովքեր ցանկանում են ընտրված լինել բազային կամ միջին աստիճանի ինքնակառավարման մեջ, գրանցվում են համապատասխան դասարանի դասղեկի մոտ մինչև ընտրությունները (առնվազն երեք օր առաջ), իսկ դասղեկ չլինելու դեպքում՝ դպրոցի տնօրենի մոտ,
ը) աշակերտների ինքնակառավարման անդամության թեկնածուների կողմից նախընտրական քարոզչության և կոմպանիայի վարման վրա տարածվում է հանրային դպրոցի հոգաբարձուական խորհրդի անդամության թեկնածուների կողմից նախընտրական քարոզչության և կոմպանիաների վարման համար սահմանած կարգը:
4. Ինքնակառավարման անդամներն ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո յոթ օրվա ընթացքում սեփական կազմից ցուցակային կազմի մեծամասնությամբ ընտրում են համապատասխան աստիճանի ինքնակառավարման նախագահ, ով ղեկավարում է աստիճանի աշակերտների ինքնակառավարումը: Միջին աստիճանի աշակերտների ինքնակառավարման նախագահը հոգաբարձուական խորհրդում ներկայացնում է աշակերտների ինքնակառավարման ներկայացուցչին:

6. Աշակերտների ինքնակառավարումը
ա) մշակում է երաշխավորություններ դպրոցի ներքին կանոնակարգի վերաբերյալ,
բ) իրավասու է հոգաբարձուական խորհրդին ներկայացնել առաջարկներ դպրոցի համար կարևոր հարցերի մասին, այդ թվում՝ ձեռք բերած դրամաշնորհի տնօրինման հետ կապված,
գ) անդամների մեկ հինգերորդի նախաձեռնությամբ ստեղծում է դպրոցական ակումբներ,
դ) միջնակարգ աստիճանում ընտրում է իր ներկայացուցչին կարգապահական կոմիտեում:

7. Բազային և միջին աստիճանների աշակերտների ինքնակառավարման անդամի իրավասությունը ժամկետից շուտ ընդհատվում է այդ դպրոցում ուսումը դադարեցնելու/ավարտելուն պես:

ՀԱՎԵԼՎԱԾ 5 (4)

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԻ» ԱԿՈՒՄԲԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ {2}

Մաս 1

Ակումբի գործունեության նպատակները

§1

«Երիտասարդ եվրոպացիների» ակումբի գործունեության նպատակներն են.

ա) Եվրոպայի, Եվրամիության և եվրաինտեգրման մասին գիտելիքների խորացումը,

բ) Եվրոպայում Վրաստանի տեղի մասին բանավեճերը,

գ) աշակերտների ակտիվ ընդգրկումը հասարակական կյանքի մեջ:

§2

Ակումբն իր նպատակներն իրականացնում է դպրոցում և նրա սահմաններից դուրս:

§3

Ակումբն իրականացնում է իր նպատակները (որոնց մասին խոսք եղավ առաջին պարագրաֆում) հետևյալ մեթոդներով.

ա) Գիտական, հասարակական և մշակութային միջոցառումների՝ հանդիպումների, պարապմունքների, սեմինարների, ներկայացումների, երեկույթների կազմակերպում:

բ) Եվրոպայի, Եվրամիության և եվրաինտեգրման մասին նյութերի ինքնուրույն հայթայթում:

գ) Բանավեճեր եվրոպական ինտեգրման գործընթացի և նրանում Վրաստանի տեղի մասին:

Մաս 2

Ակումբի անդամությունը

§ 4

Ակումբի անդամ կարող է դառնալ դպրոցի ցանկացած աշակերտ:

§ 5

Ակումբի անդամի կարգավիճակ շնորհում է վարչությունը՝ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա:

§ 6

Եթե ակումբի վարչությունն ունի որոշակի կասկածներ ակումբի անդամությանը տվյալ թեկնածուի համապատասխանության վերաբերյալ, այդ դեպքում վարչությունը ընդունելու հարցը դնում է քննարկման ընդհանուր ժողովին:

§ 7

Վարչության դիմումի հիման վրա, ընդհանուր ժողովը կարող է մերժել թեկնածուին ընդունելը, եթե գոյություն ունի հիմնավորված պատճառ, որի արդյունքում տվյալ անձի անդամությունը կարող է դեստրուկտիվ լինել ակումբի համար:

Մաս 3

Անդամների իրավունքները և պարտա-կանությունները

§ 8

Ակումբի յուրաքանչյուր անդամի իրավունքներն են.

ա) մասնակցությունը ընդհանուր ժողովին,

բ) ակտիվ և պասսիվ ընտրական իրավունքը ակումբի ղեկավարության ընտրություններին,

գ) ակումբի գործունեության մասին սեփական առաջարկությունների ներկայացումը, ակտիվ մասնակցությունը այս թեմայի շուրջ բանավեճերին:

Ակումբի յուրաքանչյուր անդամի պարտականությունների մեջ են մտնում.

ա) կանոնադրության պահպանումը,

բ) ակտիվ մասնակցությունը ակումբի նախաձեռնություններին, նրանց իրականացման հարցում օգնությունը, ակումբի ղեկավարության և այլ անդամների հետ համաձայնեցված գործողությունը,

գ) ակումբի վարչության որոշումներին ենթարկվելը:

Մաս 4
Ակումբի ղեկավարությունը

§ 9
Ակումբի ղեկավարությունն են կազմում.
ա) ընդհանուր ժողովը,
բ) ակումբի վարչությունը:

§ 10
Ընդհանուր ժողովի մեջ մտնում են ակումբի բոլոր անդամները:

§ 11
Ընդհանուր ժողովն ակումբի բարձրագույն ղեկավար մարմինն է և իրավազոր է կայացնել ցանկացած որոշում, որ կվերաբերի ակումբի գործունեությանը:

§ 12
Ընդհանուր ժողովը պետք է հրավիրվի առնվազն ամիսը մեկ անգամ՝ ակումբի ղեկավարության կողմից կամ ակումբի անդամների առնվազն մեկ երրորդի ցանկության դեպքում:

§ 13
Ընդհանուր ժողովն իրավազոր է որոշումներ կայացնել այն դեպքում, եթե նրան ներկա է ակումբի անդամների առնվազն մեկ երրորդը:

§ 14
Ընդհանուր ժողովը որոշումներ է կայացնում առավելագույն մեծամասնությամբ (այսինքն՝ կողմ ձայների քանակը պետք է գերազանցի միասին վերցված դեմ և ձեռնպահ ձայները):

§ 15
Ակումբի երեք հոգիանոց վարչությունն ընտրվում է մեկ տարով ընդհանուր ժողովի կողմից՝ ոչ ուշ, քան ուսումնական տարին սկսվելուց հետո մեկ և կես ամսվա ընթացքում.
ա) նախորդ ուսումնական տարում ընտրված վարչությունը հրավիրում է ժողով ոչ ուշ, քան ուսումնական տարին սկսվելուց հետո երեք շաբաթվա ընթացքում,
բ) ընդհանուր ժողովն իր շարքերից ընտրում է երեք մարդուց բաղկացած ընտրական հանձնաժողով,
գ) ընտրական հանձնաժողովի մեջ չեն կարող լինել վարչության առկա անդամները և վարչության ապագա անդամության թեկնածուները,
դ) ընտրական հանձնաժողովը սահմանում է ընտրությունների ընթացակարգը, որին հետագայում հավանություն է տալիս ընդհանուր ժողովը,
ե) ընտրական հանձնաժողովին դիմում են ակումբի այն անդամները, որոնք ցանկանում են հայտագրվել՝ որպես վարչության անդամության թեկնածուներ, հանձնաժողովը հայտագրում է նրանց,
զ) ընդհանուր ժողովն ընտրում է վարչություն գաղտնի քվեարկությամբ,
է) ընդհանուր ժողովի յուրաքանչյուր անդամ կարող է քվեարկել առավելագույնը երեք թեկնածուի օգտին,
ը) վարչության անդամ են դառնում ամենից շատ ձայներ ստացած և միևնույն ժամանակ ընդհանուր ժողովի անդամների ամբողջ քանակի առնվազն մեկ չորրորդի աջակցությունը ձեռք բերած երեք հոգի,
թ) եթե ընտրությունը չկարողանա որոշել վարչության բոլոր երեք անդամներին, այդ դեպքում անց են կացվում լրացուցիչ ընտրություններ:

§ 16
Ակումբի վարչությունը.
ա) Ղեկավարում է ակումբի ընթացիկ գործունեությունը:
բ) Ակումբի ներկայացուցիչն է նրանից դուրս:
գ) Իր անդամներից նախագահ է ընտրում:
դ) Որոշումներ է կայացնում ձայների բացարձակ մեծամասնությամբ՝ վարչության առնվազն երկու անդամի տեղում լինելու դեպքում:

§ 17
Ընդհանուր ժողովը կարող է լուծարել ակումբի վարչությունը կամ վաղաժամկետ ազատել նրա առանձին անդամների ձայների առնվազն երկու երրորդով: Այսպիսի դեպքերում նոր ընտրություններ են անցկացվում:

Մաս 5
Ակումբի հոգաբարձուն

§ 18
Ակումբի հոգաբարձուն աջակցում է ակումբին և օգնում նրան գործունեության մեջ: Նա միջնորդի դեր է կատարում մի կողմից՝ ակումբի, և մյուս կողմից դպրոցի տնօրինության և մանկավարժական կոլեկտիվի միջև:

§ 19
Ակումբի հոգաբարձուն ընտրվում է խորհրդատվությունների հիման վրա, որ միմյանց միջև անց են կացնում ակումբը, տնօրինությունը և մանկավարժական կոլեկտիվը:

Մաս 6
Վերջնական որոշումներ

§ 20
Տվյալ կանոնադրությունն ուժի մեջ է նրանից հետո, երբ նրա օգտին քվերակում է ակումբի անդամների երկու երրորդը՝ հոգաբարձուի և դպրոցի տնօրինության հետ խորհրդատվություններից հետո:

§ 21
Կանոնադրության մեջ փոփոխություններ կարող է մտցնել ընդհանուր ժողովը՝ ձայների երկու երրորդով՝ ակումբի հոգաբարձուի և տնօրինության հետ խորհրդատվություններից հետո:

ԹԵՄԱ 3

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀ: ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՃՌՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ



ԹԵՄԱ 3

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀ: ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՃՌՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ

Երիտասարդները հասարակության մեջ հաճախ բազմաթիվ հիմնախնդիրներ են տեսնում, ունեն նրանց վճռման ցանկություն, սակայն չեն պատկերացնում, որ իրենք կարող են մասնակցել դրանց վճռմանը կամ չգիտեն, թե ինչպես պետք է վարվեն: Տվյալ թեմայի վրա աշխատելիս՝ աշակերտները կծանոթանան հիմնախնդրի վճռման ընդհանուր ալգորիթմին: Այլ կերպ ասած, կյուրացնեն այն գործողությունների ճշգրիտ հաջորդականությունը, որ անհրաժեշտ է հիմնախնդիրների վճռման համար, բացի այդ, ընթացքում կսկսեն կոնկրետ հասարակական հիմնախնդրի վճռման համար նախագիծ իրականացնել:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ.

Աշակերտի կողմից.

- Հասարակական գործունեության նշանակության գիտակցում:
- Հասարակական շահի էության պարզում:
- Հիմնախնդրի ընտրություն գործնական աշխատանքի համար:
- Հիմնախնդրի վճռման համար պարտադիր հետևողական գործողությունների կարևորության իմաստավորում:

ԴԱՍ ԱՌԱՋԻՆ

Տնային առաջադրանքի բովանդակությունը և ստորև բերված հարցերը հնարավորություն են տալիս ուսուցչին զրույց վարել «հասարակական գործունեության» մասին:

– Ինչպե՞ս եք հասկանում «հասարակական գործունեությունը»:

– Ձեր կողմից ներկայացված ո՞ր հիմնախնդրի վրա աշխատանքը կարելի է կոչել «հասարակական գործունեություն»:

– Ինչպե՞ս եք հասկանում «հասարակական շահը» արտահայտությունը (հասարակական շահի տակ ենթադրվում է դրական, բարիք բերող ազդեցությունը և արդյունքը հասարակության համար):

– Ըստ ձեզ՝ հասարակական ի՞նչ շահ բերեց Ալբերտ Շվայցերի և Կրեգ Կյելբյուրգերի գործունեությունը:

Այսուհետև ուսուցիչն աշակերտներին դասարանում հանձնարարում է 3.1 առաջադրանքը, որով ի մի է բերվում «Հասարակական շահ» թեմայի քննարկումը: Կատարված աշխատանքը, հավանաբար, այսպիսի տեսք կունենա.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.1

(ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ)

Հիշե՛ք, թե ինչպես զարգացան իրադարձությունները Ալբերտ Շվայցերի և Կրեգ Կյելբյուրգերի գործունեության ժամանակ: Արտագծե՛ք ստորև տրված գծապատկերը և լրացրե՛ք դատարկ վանդակները երկու դեպքերի համար էլ:

ԱՆՀԱՏԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ	ԱՆՀԱՏԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀ

Կատարված աշխատանքը, հավանաբար, այսպիսի տեսք ունի.

ԱՆՀԱՏԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ	ԱՆՀԱՏԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀ
Շվայցերի որոշումը և բժշկական կրթություն ստանալը	Համագործակցություն Ֆրանսիայի Կարմիր խաչի առաքելության հետ	Հիվանդների բուժումը և հիվանդանոցի համար հիմնադրամներ փնտրելը	Հազարավոր փրկված և առողջացած մարդիկ
Կրեգի որոշումը	Խումբ հավաքելը և կապը կազմակերպության հետ	Կրթություն տալը և բնական պայմանների բարելավումը	Անտանելի կենցաղից փրկված երեխաներ: Նկրտում դեպի արդարացի հասարակություն

ԲԱՌԱՐԱՆ

ԱԼԳՈՐԻԹՄ - գործողությունների միասնականություն, որն ընթանում է խիստ կանոններով, որոնց հետևողական կատարումը մեզ հասցնում է խնդրի լուծմանը:

ԱՍՊԵԿՏ – (լատ. aspectus՝ տեսակետ. տեսակ) 1) տեսակետ, որից ելնելով քննարկվում է առարկան, երևույթը, հասկացությունը, 2) տվյալ երևույթի կողմերից մեկը կամ կապը:

ԻՆԴԻԿԱՏՈՐ - (լատ. indicator՝ ստուգիչ) ցուցանիշ:

3.1 հանձնարարության կատարումից հետո բնականաբար հնչում է հարց, թե ինչպե՞ս պետք է վճռվի այս կամ այն հիմախնդիրը:

Հիմնախնդրի վճռման ալգորիթմի վրա աշխատել սկսելու համար՝ ուսուցիչն աշակերտներին առաջարկում է մտավոր գրոհ՝ 3.2 առաջադրանքի տեսքով: Առաջադրանքի «ա» կետը հանդիսանում է մտավոր գրոհի առաջին փուլը: Ուսուցիչը գրատախտակի վրա գրում է հարցը. «Ի՞նչ աստիճաններ է անհրաժեշտ անցնել (ընդհանրապես) հիմնախնդրի վճռման համար»: Աշակերտներից ստացած բոլոր պատասխաններն ընդունվում են՝ առանց մեկնաբանությունների և գնահատման և համառոտ գրվում գրատախտակին: «Բ» կետը մտավոր գրոհի երկրորդ փուլն է՝ առաջադրանք անհատական աշխատանքի համար, ինչը աշակերտներին մտորել կտա հիմախնդրի վճռման համար անհրաժեշտ գործողությունների հաջորդականության մասին: Սա, իր հերթին, կօգնի աշակերտներին նախագծի իրականացման ժամանակ ձեռնպահ մնալ ինքնաբերական գործողություններից: Հնարավոր է, որոշ աստիճաններ աշակերտների համար անհասկանալի լինեն, կամ թվա, թե ավելորդ են: Ուսուցիչը կարող է (եթե անհրաժեշտ է համարում) նույն տեղում բացատրել կամ հետագա աշխատանքի ընթացքում ցույց տալ այս կամ այն աստիճանի անհրաժեշտությունը: «Գ» կետը ենթադրում է ամփոփված տարբերակի կազմում (մտավոր գրոհի երրորդ փուլ):

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.2

ա) Պատասխանե՛ք հարցին. ի՞նչ աստիճաններ է անհրաժեշտ անցնել (ընդհանրապես) հիմախնդրի վճռման համար (ուսուցիչը ձեր կարծիքները կարձանագրի գրատախտակի վրա):

Բ) Ստորև առաջարկում ենք հիմախնդրի վճռման համար անցնելու աստիճանների ցանկը: Այս ցանկի և գրատախտակի վրա գրված ձեր պատասխանների օգտագործմամբ, անհատապես կազմե՛ք հասարակական հիմախնդրի վճռման ընդհանուր ալգորիթմ (աստիճանները գրե՛ք ճիշտ հաջորդականությամբ): Եթե որևէ աստիճան ավելորդ եք համարում, մի՛ գրեք:

- Հիմախնդրի ուսումնասիրում: Հիմախնդրի մասին տեղեկության հավաքում:
- Հիմախնդրի մասնատում ասպեկտների:
- Հիմախնդրի ասպեկտի ընտրություն:
- Գործողությունների պլանի կազմում:
- Նախագծի կատարման ստուգիչների սահմանում:
- Վճռվելիք հարցերի ներկայացման նախապատրաստում:
- Հիմախնդիրը տեսնել:
- Խումբ ձևավորել:
- Գործողությունները վարել:
- Գնահատում:

գ) Անհատական աշխատանքների ընդհանուր քննարկումից հետո կազմե՛ք ալգորիթմի համաձայնեցված տարբերակ:

1. Հիմնախնդիրը տեսնել:
2. Խումբ ձևավորել:
3. Հիմնախնդրի ուսումնասիրում: Հիմնախնդրի մասին տեղեկության հավաքում (աղբյուր՝ ընտանիք, ընկերներ, գրադարան, թերթեր-ամսագրեր, ուսուցիչներ, հեռուստատեսություն, համացանց, այս հիմնախնդրի վրա աշխատող կազմակերպություններ):
4. Հիմնախնդրի մասնատում ասպեկտների (հնարավոր է, կոնկրետ թեման ենթակա չլինի ասպեկտների մասնատման):
5. Հիմնախնդրի ասպեկտի ընտրություն, նպատակի ձևակերպում:
6. Գործողությունների պլանի կազմում:
7. Նախագծի կատարման ստուգիչների սահմանում:
8. Վճռվելիք հարցերի ներկայացման նախապատրաստում:
9. Հիմնախնդրի ներկայացում գործընկերներին և համագործակցության սկիզբ:
10. Գործողությունները վարել:
11. Գնահատում:

Ելնելով կատարված տնային (2.1) առաջադրանքից՝ դասարանն ընտրում է առավելագույնը 3-4 հիմնախնդիր, որոնց վրա կաշխատի մեկական խումբ:

Ուսուցիչը լավ պետք է գիտակցի աշակերտների կողմից ընտրված հիմնախնդիրը (քանի որ նախնական փուլում հնարավոր է, որ աշակերտները անորոշ պատկերացում ունենան սեփական նախագծի գաղափարի մասին), պետք է մտածի այնպիսի հիմնախնդիրների մասին, որոնք տեղական կամ ազգային իրադարձությունների հետ են կապվում, մտածի, թե որքանով իրականանալի են ընտրված նախագծերը դպրոցի, շրջանի մակարդակով, օգտագործի առարկայական չափորոշիչները, քանի որ դրանք պարունակում են այս առարկայի համար ամենանշանակալի արդյունքներ ինչպես գիտելիքի, այնպես էլ հմտությունների և կարողությունների տեսանկյունից, ուշադրությունը կենտրոնացնի բարեգործական աշխատանքների վրա, սահմանի նախագծի ծավալը:

Նախագծի վրա հիմված ուսուցման առանձնահատկությունն ուսուցչից պահանջում է ոչ թե տեղեկության հաղորդում, այլ ուսումնական գործընթացի կազմակերպում և վարում: Սա բավականին բարդ և բազմակողմանի դեր է և ուսուցչից պահանջում է ինչպես առաջնորդի, այնպես էլ օգնողի կարողության դրսևորում: Ուսուցչից կլինի կախված, թե որքանով ճիշտ ուղղությամբ կզարգանա նախագիծը:

Իսկ հաջողության գրավականը, միևնույն է, ուսուցչի և աշակերտների համագործակցության մեջ է: Պետք է ձևավորվի համագործակցության և հարգանքի վրա հիմնված օպտիմալ ուսումնական միջավայր:

Տանը կատարելու համար ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է 3.3 առաջադրանքը: Այս առաջադրանքով

սկսվում է աշակերտների կողմից նախագծի գործնական իրականացումը: 71-րդ էջին տրված է աղյուսակ, որում ցույց է տրված, թե կոնկրետ որ առաջադրանքն է ծառայում կոնկրետ նախագծի իրականացմանը և ալգորիթմի որ աստիճանին է համապատասխանում այն: Աշակերտները վճռում են, թե դասարանում ընտրված 3-4 հիմախնդիրներից որի վրա կաշխատի նրանցից յուրաքանչյուրը: Սա անչափ կարևոր է: Ուսուցիչը պետք է ընդգծի այն հանգամանքը, որ խմբում բոլորը կունենան իրենց գործառույթը և այդ պատճառով տարբեր կարողություններով աշակերտների միավորումը օգուտ կբերի նախագծին: Բացի այդ, պետք է հաշվեկշռվի աղջիկների և տղաների քանակը և խմբի էթնիկական կազմը: Անպայման չէ, որ բոլորը ցանկանան տվյալ փուլում մասնակցել ընտրված նախագծին: Հնարավոր է, աշակերտը մի փոքր ուշ միանա որևէ խմբի, կամ նրա մոտ նախագծին մասնակցելու ցանկություն առաջանա ուրիշ ժամանակ, երբ նրան կհետաքրքրի այս հիմախնդիրը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.3

Մտածե՛ք, թե որ հիմախնդրի վրա եք կամենում աշխատել, ընտրե՛ք համադասարանցիների կամ դպրոցի այլ աշակերտների, ում հետ մտադիր եք իրականացնել նախագիծը և համաձայնության եկեք նրանց հետ: Նկատի՛ ունեցեք համամասնակիցների ընտրության սկզբունքները: Հիմավորե՛ք ձեր ընտրությունը:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ

Աշակերտների կողմից հիմախնդիրների վճռման ալգորիթմի աստիճանների գիտակցում:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

(3.3) առաջադրանքի ստուգումով ուսուցիչը պարզում է, թե արդյոք ձևավորվե՞լ են խմբերը: Ընդհանուր ալգորիթմի առաջին կետը՝ «Հիմախնդիրը տեսնելը» իրականացվել է 1.2 առաջադրանքի կատարմամբ: Տնային 3.3 առաջադրանքը ծառայում է «Խմբերի հավաքմանը»:

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է խմբերով կատարել առաջադրանքը, որի նպատակն է գիտակցել ալգորիթմի յուրաքանչյուր աստիճանը և այն ներկայացնել համադասարանցիներին:

Ուսուցիչն աշակերտների խմբերին ծանոթանալու է բաժանում ալգորիթմի մեկական աստիճան և «ե՞րբ և ինչպե՞ս պետք է կազմակերպվի խմբի հավաքը», «ի՞նչ հարցեր պետք է քննարկվեն» հարցերը: Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը պետք է կենտրոնացնի այն բանի վրա, որ ներկայացված աստիճանը դասարանի կողմից ըմբռնված լինելու համար պատասխանատու է յուրաքանչյուր զույգ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.4

Ծանոթացե՛ք հիմնախնդրի վճռման ընդհանուր ալգորիթմին և մտածե՛ք, թե ինչ է նշանակում այս կամ այն աստիճանի կատարումը (յուրաքանչյուր խումբ մեկ աստիճան պետք է քննարկի):

Հիմնախնդրի վճռման ընդհանուր ալգորիթմը.

1. Հիմնախնդիրը տեսնել:
2. Խումբ ձևավորել:
3. Հիմնախնդրի ուսումնասիրում: Հիմնախնդրի մասին տեղեկության հավաքում (աղբյուր՝ ընտանիք, ընկերներ, գրադարան, թերթեր-ամսագրեր, ուսուցիչներ, հեռուստատեսություն, համացանց, կազմակերպություններ, որոնք աշխատում են այս հիմնախնդրի վրա):
4. Հիմնախնդրի մասնատում ասպեկտների (հնարավոր է, կոնկրետ թեման ենթակա չլինի ասպեկտների մասնատման):
5. Հիմնախնդրի ասպեկտի ընտրություն, նպատակի ձևակերպում:
6. Գործողությունների պլանի կազմում:
7. Նախագծի կատարման ստուգիչների սահմանում:
8. Վճռվելիք հարցերի ներկայացման նախապատրաստում:
9. Հիմնախնդրի ներկայացում գործընկերների մոտ և համագործակցության սկիզբ:
10. Գործողությունները վարել:
11. Գնահատում:

Դասի մնացած մասը կտրամադրվի աշակերտների աշխատանքների քննարկմանը և ուսուցչի կողմից դրանց ուղղմանը: Կարևոր է, որ աշակերտներն ուշադիր լսեն միմյանց, հարցեր առաջադրեն և պատասխաններ ստանան աշակերտներից կամ ուսուցչից: Ցանկալի է, որ հասցնեն քննարկել «Նախագծի կատարման ստուգիչները» ներառյալ: Մնացած հարցերի քննարկումը կավարտվի հաջորդ դասին:

ԽՄԲԻ ՀԱՎԱՔՈՒՄ

Խմբի անդամները հավաքվում են այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը պահանջում է աշխատանքի ընթացքը, սակայն առաջին հավաքն անպայման պետք է տեղի ունենա անմիջապես խմբի ձևավորման հետ, որպեսզի սահմանվեն անդամների գործառույթները հիմնախնդրի ուսումնասիրման ժամանակ: Իսկ երկրորդ հանդիպումը պետք է կայանա անդամների կողմից հիմնախնդրի վերաբերյալ տեղեկությունների ձեռքբերումից հետո: Հավաքվելու համար անհրաժեշտ է սահմանել ժամանակը, տեղը, օրակարգը: Աշակերտներին անհրաժեշտ է բացատրել, որ օրակարգը հստակ ձևավորված է, ժամանակի մեջ սահմանված է քննարկվելիք հարցերի ցանկը: Երկրորդ հավաքի ժամանակ անդամներն իրար պետք է ծանոթացնեն հիմնախնդրի ուսումնասիրման արդյունքները և կատարեն ալգորիթմի հետևյալ

կետերը. հիմախնդրի բաժանում ասպեկտների, հիմախնդրի ասպեկտների ընտրություն՝ նպատակի ձևակերպում, գործողությունների պլանի կազմում և նախագծի կատարման ստուգիչների սահմանում, հաջորդ հանդիպման ժամանակի սահմանում: Բոլոր որոշումները պետք է գրի առնվեն: Հանդիպման ժամանակ անհրաժեշտ է, որ խմբի անդամները լսեն բոլորի կարծիքները, հարգանքով վերաբերվեն միմյանց, կարողանան համաձայնության գալ տարբերվող հարցերի շուրջ:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

Հիմախնդրի ուսումնասիրումը ենթադրում է հիմախնդրի մասին տեղեկությունների հավաքում և նրանց հետագա վերլուծություն: Տեղեկությունների աղբյուր կարող են լինել ընտանիքը, ընկերները, գրադարանը, թերթերը, ամսագրերը, ուսուցիչները, հեռուստատեսությունը, համացանցը, կազմակերպությունները, որոնք աշխատում են այս հիմնախնդիրների վրա: Անհնար է ամեն ինչ մտապահել: Անհրաժեշտ է գրառումներ անել կամ տպագիր տեղեկություններ հավաքել: Հիշեցրեք աշակերտներին, որ ոչինչ բաց չթողնելու և հետագայում գործողությունների պլանի կատարումը հեշտացնելու համար օգտագործեն նախագծին անհրաժեշտ ռեսուրսների հաշվառման թերթիկ (հավելված 6(5)): Հավելվածներում տրված ձևերը ոչ միայն կհեշտացնեն աշակերտների աշխատանքը, այլ նաև կհիշեցնեն, թե ինչի վրա պետք է կենտրոնացնեն ուշադրությունը, որ առանձնապես կարևոր է սկզբնական փուլում:

Հետազոտման անցկացման համար խմբին կամ առանձին անդամների հնարավոր է անհրաժեշտ լինի անցկացվելիք հետազոտման համառոտ պլան (հավելված 7(6)), իսկ հետազոտման անցկացումից հետո՝ անցկացված հետազոտման հաշվետվության ձևը (հավելված 8(7)):

Աշակերտի գրքում տրված են նաև հարցազրույց վարելու և հարցվողի հետ վարքի կանոնները:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ

Հիմախնդիրը կարող է բազմաթիվ ասպեկտներ ընդգրկել: Ասպեկտը քննարկվելիք օբյեկտի կողմն է, տեսակետը: Համարյա անհնար է բարդ հիմախնդրի բոլոր ասպեկտները միաժամանակ վճռել (օրինակ՝ տուբերկուլյոզի հիմախնդիրն ունի հետևյալ ասպեկտները՝ բուժական, կրթական, կանխարգելիչ, վերաբերմունքային, սոցիալական): Այդ պատճառով հիմախնդրի վճռման փորձի ժամանակ լավ պետք է վերլուծվեն նրա բոլոր ասպեկտները: Հնարավոր է, որ կոնկրետ հիմնախնդիրը ասպեկտների բաժանելու ենթակա չլինի:

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՐՑՎՈՂ – անձ, որը պատասխանում է հարցարանի կամ հարցազրույցի ժամանակ առաջադրված հարցերին և հանդիսանում է բանավոր կամ գրավոր տեղեկության աղբյուր:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ – կանխարգելող բնույթի, խուսափելու, պաշտպանական: Կանխարգելում՝ պրևենցիա (լատ. praevencio), նախօրոք միջոցների ձեռնարկում՝ որևէ բանից խուսափելու նպատակով:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԱՍՊԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Անհրաժեշտ է սահմանել, թե որ ասպեկտի վրա է մտադիր աշխատել խումբը: Սա նրան կօգնի ձևակերպել նպատակը: Նպատակը պետք է լինի կոնկրետ, չափելի, նվաճելի, իրատեսական և ժամանակի մեջ սահմանված:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Նպատակի ձևավորման պես, խմբերը համագործակցության համար պետք է որոշեն իրենց գործընկերներին: Պետք է բաշխվեն գործառույթները խմբի անդամների միջև: Պետք է սահմանվեն կատարման իրատեսական ժամկետները, պլանավորվեն գործողությունները, սահմանվեն հնարավոր հակադրությունները: Պետք է սահմանել նաև անհրաժեշտ ռեսուրսները: Սա վերաբերում է ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ռեսուրսներին: Եթե նախագծին անհրաժեշտ է նյութական ռեսուրս, պետք է գտնել աղբյուր (տե՛ս http://www.initiatives.ge կայք-էջը): Նախագծի աստիճանների կատարման ժամանակացույցը աշակերտները կարող են գրել 9(8) հավելվածում տրված ձևով, իսկ նախագծի համառոտ պլան կազմելու համար օգտվել 12(11) հավելվածում տրված ձևից:

Հավանաբար, աշակերտներին անհրաժեշտ կլինի տարբեր կազմակերպությունների աջակցություն և օգնություն: Այդ նպատակով նրանք համապատասխան կազմակերպությանը պետք է ներկայացնեն տեղեկություններ նախագծի մասին և խնդրեն կոնկրետ աջակցություն: Առաջարկում ենք հատուկ ստեղծված նախագծային հայտաձև, որը կազմելու հարցում, հավանաբար, ուսուցչի օգնություն անհրաժեշտ կլինի:

Նախագծային հայտը պետք է բաղկացած լինի հետևյալ մասերից.

- Տիտղոսաթերթ
- Տեղեկություններ հայտատուի վերաբերյալ (նախագծի հիմնական իրականացնողները, գործընկերները և նրանց կոնկրետ դերերը)
- Նախագծի համառոտ ամփոփում (նախագծի նպատակը և ակնկալվող արդյունքները, նախագծի իրականացման համառոտ նկարագիր)
- Հիմնախնդրի/անհրաժեշտությունների նկարագիր (մանրամասն պետք է նկարագրվի այն հիմնախնդիրը, որի կարգավորումը ձեր նախագծի նպատակն է)
- Նախագծի մանրամասն նկարագիր (ինչ ակտիվություններ կիրականացվեն նախագծի շրջանակներում, ինչ միջոցառումներ կիրականացվեն նախագիծն իրականացնողների և նրանց գործընկերների կողմից՝ ի պատասխան տվյալ հիմնախնդիրների)

- Նախագծի իրականացման ժամանակացույցը (աղյուսակի տեսքով ներկայացված նախագծի իրականացման պլան՝ ըստ շաբաթների և ամիսների, որը ցույց է տալիս, թե ինչ ժամանակամիջոցում ինչ գործունեություն կիրականացվի)
- Նախագծի բենեֆիցիարները (ովքեր են այն մարդիկ/մարդկանց խմբերը, որոնց օգուտ կբերի տվյալ նախագիծը)
- Նախագծի բենեֆիցիարների քանակն՝ ըստ կարգերի (օրինակ՝30 մանկավարժ, 35 ծնող, դպրոցի վարչության 10 ներկայացուցիչ, համայնքի 100 ներկայացուցիչ և այլն)
- Նախագծի գնահատումը (ինչպես կգնահատի իրականացնողը նախագծի գործունեության արդյունավետությունը)
- Նախագծի բյուջեն (այստեղ պետք է նշվի, թե ինչ քանակությամբ գումար է խնդրում իրականացնողը դոնոր կազմակերպությունից, նախագծի համար ինչ քանակության համամասնակցություն կունենա հայտատուն մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների տեսքով, օրինակ՝ նախագիծն իրականացնողների կողմից անհատույց աշխատանք, գիտաժողովային դահլիճի կամ տեխնիկայի անհատույց տրամադրում և այլն)
- Ռիսկ-գործոնների նկարագիր (պետք է թվարկված լինեն այն ռիսկ-գործոնները, որոնք հնարավոր է խանգարեն նախագծի իրականացմանը և նրա նպատակներին հասնելուն)
- Նախագծի կենսունակության պլան (պետք է նկարագրվի, թե ինչպես կշարունակվի նախագիծը ֆինանսավորումից ընդհատելուց հետո):

ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳԻՉՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ինդիկատորը՝ ստուգիչը, լատիներեն բառ է և նշանակում է ցուցանիշ: Արդյունքների գնահատման համար նախօրոք պետք է սահմանվեն կատարման ստուգիչները (ըստ հնարավորինս քանակային), այսինքն՝ ցուցանիշները, որոնք մատնանշում են նախագծի կատարում-չկատարումը: Մանրամասն բացատրելու նպատակով, ուսուցիչը կարող է ասել հետևյալը. ստուգիչը (այս դեպքում) նրա չափելի ցուցանիշն է, թե ինչպես է նվաճվել այս կամ այն նպատակը՝ որոշակի պլանավորված գործողության ժամանակ: Օրինակ՝ պլանավորված է խոհարարական արտադրանք վաճառել՝ տարեցների ապաստարանի համար տաք վերմակներ գնելու նպատակով: Իրականացնողը պետք է իմանա, թե ինչ արժի վերմակը և հաշվարկի, թե ընդամենը քանի վերմակ է անհրաժեշտ ապաստարանին: Խոհարարական տոնավաճառից ստացած հասույթով ստացած վերմակների քանակը կլինի նրա ստուգիչը, թե որքանով հաջող իրականացվեց նախագիծը:

ՎՃՌՎԵԼԻՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Շնորհանդեսի պատրաստումը պարտադիր է համագործակցության համար ընտրված գործընկերոջը համոզելու համար: Գործընկերը հստակ պետք է տեսնի հիմնախնդիրը և իր դերը դրա վճռման մեջ: Գործընկերոջ դերը չպետք է գերազանցի նրա հնարավորությունները: Այս ամենը նրան պետք է ներկայացվի համառոտ, հասկանալի և համոզիչ: Շնորհանդեսը պետք է ունենա ներածություն, որով ներկայացնողը կգրավի լսարանի ուշադրությունը, և որում տրված կլինի նրա նպատակը: Ներկայացման հիմնական մասը հետևողականորեն պետք է լինի դասավորված և ամրապնդված փաստերով: Եզրակացության մեջ համառոտ պետք է տրված լինեն բոլոր հիմնական հարցերը:

Ուսուցիչն աշակերտներին խորհուրդ է տալիս շնորհանդեսին պատրաստվելու համար մի քանի փորձ անել (մենակ, ընկերների ներկայությամբ, ուսուցչի ներկայությամբ), խոսել բարձրաձայն և հստակ, բացատրել բոլոր անծանոթ բառերը, թեմայից չշեղվել: Օգտագործված դիդակտիկ նյութերը ուղղակիորեն պետք է կապված լինեն թեմայի հետ և լսարանի համար հեշտացնեն տեղեկության ընկալումը (հավելված 10(9)): Շնորհանդեսի տևողությունը պայմանական է, սակայն ունկնդիրը չպետք է հոգնի: Եթե անհրաժեշտ է, կարելի է մտածել գովազդի հնարավորության մասին:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՄՈՏ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Բացի շնորհանդեսից, հնարավոր է, անհրաժեշտ լինի գտնել գործընկերոջ հետ հարաբերության ձևեր (դիմումով դիմել, էլեկտրոնային տեղեկագիր ուղարկել և այլն):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՈՒՄ

Գործողությունները պետք է վարեն ըստ պլանի: Խմբի անդամները պետք է միմյանց հետ փոխանակեն իրենց արդյունքները: Եթե անհրաժեշտությունը պահանջում է, հնարավոր է պլանը սրբագրել:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որպեսզի հասկանալի դառնա, վճռվե՞լ է արդյոք հիմնախնդիրը, նախ՝ իրականացված նախագիծը պետք է գնահատվի կատարման ստուգիչների միջոցով: Բացի այդ, խումբը պետք է պատասխանի մի քանի հարցի. ո՞րն էր նախագծի դրական կողմը, և ո՞րը՝ բացասականը, ի՞նչը կարելի էր ավելի լավ անել, ի՞նչը կարող է փոխել յուրաքանչյուր անդամ, բացի այդ, անչափ կարևոր է, որ գնահատվի նախագծի հասարակական շահը: Պետք է պատասխան տրվի հարցին. ի՞նչ օգուտ բերեց այս նախագիծը հասարակությանը:

Լավ կլինի, եթե աշակերտները մտորեն սեփական ապրումների մասին նախագծի իրականացման ժամանակ և այն ավարտելուց հետո, պատկերացնեն, որ իրենց վարած հասարակական գործունեությունը մակագրություն է «Ակտիվ գործունեություն» բումերանգի վրա: Նրանք այս բումերանգն արձակեցին և ինչ վերադարձավ նրանց բումերանգի հետ: Ստացած արդյունքների վերլուծությունը և բանավեճը դրանց մասին կնպաստեն ստացած գիտելիքի և կարողությունների երկար ժամանակով պահպանմանը: Այս գործընթացում աշակերտներին պիտանի կլինեն 12(11)-14(13) հավելվածները: Բացի այդ, օգտակար կլինի, եթե աշակերտները լսեն ուսուցչի գնահատումը:

Ծանոթություն. բացի հավելվածներում առաջարկված ձևերից, ուսուցիչը կարող է աշակերտներին առաջարկել միասին կազմել գնահատման աղյուսակները:

Ուսուցիչը խմբերին տալիս է (ըստ ընտրված հիմախնդիրների) տնային առաջադրանք: 3.5 առաջադրանքը ենթադրում է դպրոցից դուրս խմբերի կողմից մի շարք հարցերի ինքնուրույն գործնական կատարում և արդյունքների ներկայացում հաջորդ դասին:

Կարևոր է, որ հասարակական գործունեության ժամանակ աշակերտները նախատեսեն այն անհատների զգացումները, որոնց օգնելուն է ուղղված նրանց գործունեությունը: Օգնությունը պետք է իրականացվի տակտով: Դրա համար գոյություն չունի համապիանի դեղատոմս: Դա կախված է կոնկրետ հիմախնդրից և հանգամանքներից: Որոշ դեպքերում անհրաժեշտ չէ գործն ավելորդ բարձրաձայնել: Չպետք է ընդգծվի անհատների առանձնահատուկ լինելը (օրինակ՝ նրանց սահմանափակ հնարավորությունները): Եթե հիմախնդիրը վերաբերում է ազգային փոքրամասնություններին, լավ կլինի նախագծի մեջ ընդգրկել տվյալ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և հիմնախնդիրը քննարկել մշակութային բազմերանգության հիմախնդրի ֆոնի վրա: Հիմախնդրի վճռման վրա աշխատանքը չպետք է ստեղծի նոր հիմախնդիր ոչ մի մակարդակում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.5

ա) Անցկացրեք խմբի առաջին հավաքը և բաժանեք գործառույթները ընտրված հիմախնդիրների մասին տեղեկությունների հավաքման համար:
բ) Անցկացրե՛ք խմբի երկրորդ հավաքը, որի ժամանակ կներկայացնեք ձեռք բերված տեղեկությունները և կանցնեք ալգորիթմի հետևյալ աստիճանները.
- Հիմախնդրի բաժանում ասպեկտների (հնարավոր է կոնկրետ հիմախնդիրը ենթակա չլինի ասպեկտների բաժանման):
- Հիմախնդրի ասպեկտի ընտրություն, նպատակի ձևակերպում:
- Գործողությունների պլանի կազմում:
- Նախագծի կատարման ստուգիչների սահմանում:
գ) Արդյունքները ներկայացրե՛ք դասարանում:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Դասի առաջին մասը կտրամադրվի տնային (3.5) առաջադրանքի ստուգմանը: Յուրաքանչյուր խումբ կներկայացնի ընտրված նախագծի ընթացիկ վիճակը: Անչափ կարևոր է, որ ուսուցիչը վերահսկի աշակերտների աշխատանքը՝ ըստ կազմած ալգորիթմի: Թեպետ, պետք է նկատի ունենալ, որ, ելնելով հիմախնդրից, աստիճանների բաժինը կարող է տարբեր լինել:

Տնային առաջադրանքն ուշադիր ստուգելու դեպքում ուսուցիչը կկարողանա տեսնել նախագծի ընթացքի թույլ կողմերը և ժամանակին օգնություն կցուցաբերի աշակերտներին: Գործողությունների պլանի քննարկման ժամանակ երաշխավորվում է կիրառել «Համաձայնեցված բանավեճի» եղանակը:

Դասի մնացած մասը կտրամադրվի ալգորիթմի այն կետերի քննարկմանը, որ չեն հասցրել քննարկել նախորդ դասին: Ուսուցիչը անպայման պետք է զգուշացնի աշակերտներին, որ նախագծի ընթացքի վրա կարող են ազդել տարբեր հանգամանքներ և երբեմն անհրաժեշտ կլինի անդրադառնալ այս կամ այն աստիճանին: Սա աշակերտներից պահանջում է որոշակի ճկունություն:

Աշակերտներին տանը հանձնարարվում է 3.6 առաջադրանքը: Այն ենթադրում է նախագծի վրա խմբերի աշխատանքների շարունակություն:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

Դասի հիմական ժամանակը տրամադրվում է պատրաստված շնորհանդեսների քննարկմանը և սրբագրմանը: Դրան մասնակցում է ամբողջ դասարանը: Խումբն, ըստ ցանկության, կարող է ընդունել և նկատի ունենալ դիտողությունները:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ.

Աշակերտների կողմից հիմախնդրի վճռման ալգորիթմի աստիճանների գիտակցում և նախագծի իրականացման ընթացիկ վիճակի արձանագրում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.6

Պատրաստե՛ք նախագծի շնորհանդես հնարավոր գործընկերների համար:

Ուսուցչի երաշխավորությունները

Այս դասին ուսուցչին հնարավորություն է տրվում աշակերտներին զերծ պահել ակնհայտ սխալներ թույլ տալուց և նրանց խորհուրդ տալ հետագա աշխատանքի համար: Դասի վերջին ուսուցիչն ունենում է նախագծի ընթացքի ընդհանուր պատկերը:

Դասից հետո աշակերտները կապվում են գործընկերների հետ և սկսում են գործել:

Անհրաժեշտ է, որ ուսուցիչը հիշեցնի աշակերտներին, որ նախագիծն ավարտելու ժամանակ պետք է տեղի ունենա գնահատում և այնուհետև արդյունքների հրապարակավ (դասարանում, դպրոցում ...) ներկայացում:

Կարևոր է, որ նախագծի գնահատմանը մասնակցեն նաև աշակերտները:

Այս ամենը ի մի է բերված 3.7 տնային առաջադրանքում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.7

ա) Նախագիծը ներկայացրե՛ք հնարավոր գործընկերներին:
բ) Գործե՛ք ըստ նախանշված պլանի:
գ) Գնահատե՛ք կատարվելիք աշխատանքը:
դ) Ծանոթացրե՛ք նախագծի արդյունքները հասարակությանը:

Հաջորդ էջին տրված է աղյուսակ, որն արտացոլում է կոնկրետ նախագծի իրականացման համար տրված առաջադրանքները և հիմախնդրի վճռման ալգորիթմի համապատասխան աստիճանները:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎՃՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԼԳՈՐԻԹՄ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԿՈՆԿՐԵՏ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ
1. ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏԵՄՆԵԼ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.2
	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.3
2. ԽՈՒՄԲ ՀԱՎԱՔԵԼ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.3
3. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ: ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ (ԱՂԲՅՈՒՐ. ԸՆՏԱՆԻՔ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ, ԳՐԱԴԱՐԱՆ, ԹԵՐԹԵՐ-ԱՄՍԱԳՐԵՐ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՅԱՆՑ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԱՅՍ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎՐԱ)	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.5
4. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ (ՀՆԱՐԱՎՈՐ Է, ԿՈՆԿՐԵՏ ԹԵՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԼԻՆԻ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ)	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.5
5. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԱՍՊԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ: ՆՊԱՏԱԿԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ:	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.5
6. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.5
7. ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳԻՉՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.5
8. ՎՃՌՎԵԼԻՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.6
9. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.7
10. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.7
11. ԳՆԱՀԱՏՈՒՄ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.7

Աշակերտների ընթացիկ ակտիվությունները և նախագիծը չեն գնահատվում գնահատականներով, սակայն ուսուցիչը պետք է գնահատի (առանց թվանշանի) և՛ ակտիվությունները, և՛ նախագիծը, որպեսզի ժամանակին որակյալ խորհուրդներ տա աշակերտներին: Սա արտացոլվում է ինչպես ընթացիկ, այնպես էլ հետագա նախագծերի իրականացման որակի վրա: Հավելվածում տեսե՛ք Ազգային ուսումնական պլաններում առաջարկված գնահատման աղյուսակները (հավելվածներ 16-18), որոնք կարող եք համապատասխանեցնել կոնկրետ դեպքերին:

ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ. ԱՇԱԿԵՐՏ. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ.

ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՅՔԵՐ
ԳՐՔԵՐ/ԱՅԼ ՏՊԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐ
ԾՆՈՂՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ
ՄԱՄՆԱՎՈՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԾՐԱԳՐԵՐ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐ/ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ
ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՄԲԵՐ

ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԼԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ

ՀԱՐՑ(ԵՐ), ՈՐՈՆՔ ՄՏԱԴԻՐ ԵՄ ՀԵՏԱԶՈՏԵԼ.	
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐ ԻՆՉ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԱՎԱՔԵԼ.	ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ.
Ո՞Վ ԿԱՆԻ	Ի՞ՆՉ
ԱՅՍ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆ Ի՞ՆՉ ԿԱՎԵԼԱՑՆԻ ՆԱԽԱԳԾԻՆ	

ՀԱՎԵԼՎԱԾ 8 (7)

ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ

ԵՍ ՀԵՏԱԶՈՏԵԼ ԵՄ.
ԿԱՏԱՐԵԼ ԵՄ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՄ, ՈՐ.
ՍՈՎՈՐԵԼ ԵՄ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ ՀԵՏԵՎՅԱԼԸ.
ԻՄ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ, ՀԱՄԱՐՈՒՄ ԵՄ, ՈՐ ՆԱԽԱԳԾԻ ՄԵՋ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ (ԵԹԵ ԿԱՆ ԱՅԴՊԻՍԻՔ).

ՆԱԽԱԳԾԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ. ԱՇԱԿԵՐՏ. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ.

ԱՍՏԻՃԱՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎԸ	ԿԱՏԱՐՎԵԼ Է
		☐
		☐
		☐
		☐
		☐
		☐
		☐
		☐
		☐
		☐
		☐
		☐

ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԼԱՆ ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ. ԱՇԱԿԵՐՏ(ՆԵՐ). ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ.

Ո՞Վ Է ԻՄ ԼՍԱՐԱՆԸ:
Ի՞ՆՉ ԿԻՄԱՆԱ ԼՍԱՐԱՆՆ ԻՄ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:
ԽՄԲԱՅԻՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԴԵՊՔՈՒՄ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ Ո՞Ր ՄԱՍԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ Է ԻՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
Ի՞ՆՉ ՄԱՍԵՐԻՑ Է ԲԱՂԿԱՑԱԾ ԻՄ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ:
ԿԱՐԾՈՒՄ ԵՄ, ԱՅՍ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՍՈՎՈՐԵՄ ՀԵՏԵՎՅԱԼԸ.
Ի՞ՆՉ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՊԵՏՔ Է ԴԱՐՁՆԵՆՔ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.
ԻՄ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՐ ԻՆՉ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵԽՆԻԿԱՆ/ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ.
ԻՄ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՐ ԻՆՉ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐԸ.
Ի՞ՆՉ ՀԱՐՑԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԸ		
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԲՈԼՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ԵՎ ՀԻՄՆՎՈՒՄ ԵՆ ՓԱՍՏԵՐԻ ՎՐԱ:	☐
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ		
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	ՆԵՐԱԾԱԿԱՆԸ ԳՐԱՎՈՒՄ Է ԼՍԱՐԱՆԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ Է: ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՌՈՏ ԿՐԿՆՈՒՄ Է ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ:	☐
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ		
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐԱԿԸ	ԱՇԱԿԵՐՏԸ ԼԱՎ Է ՊԱՏՐԱՍՏՎԱԾ: ԿԱՐՈՂ Է ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԼՍԱՐԱՆԻ ՀԱՐՑԵՐԻՆ:	☐
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ		
ԶՐՈՒՅՑ	ԱՇԱԿԵՐՏԸ ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԵՎ ՀՍՏԱԿ Է ԽՈՍՈՒՄ ԱՅՆՊԵՍ, ՈՐ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՆԵՐԿԱ ՀԱՍԿԱՆՈՒՄ Է ՆՐԱ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ: ՉԻ ՇԵՂՎՈՒՄ ԹԵՄԱՅԻՑ:	☐
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ		
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ	ԱՇԱԿԵՐՏԸ ԲԱՐԻ Է ԵՎ ԲԱՐՅԱՅԱԿԱՄ:	☐
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ		
ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐ	ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐՆ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԿԱՊՎԱԾ ԵՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԹԵՄԱՅԻ ՀԵՏ, ԼԱՎ ԵՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ՀԱՐՍՏԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՂՈՐԴԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:	☐
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ		
ԺԱՄԱՆԱԿԱՉԱՓԻ ՊԱՀ-ՊԱՆՈՒՄԸ	ԱՇԱԿԵՐՏԸ ՆՈՒՅՆՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ Է ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻՆ, ՈՐՔԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՎ/ԿԱՄ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ԷՐ:	☐
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ		

ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՌՈՏ ՊԼԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ. ԱՇԱԿԵՐՏ. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ.

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ/ՀԱՐՑԸ, ՈՐԻ ՎՃՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՆԱԽԱԳԻԾԸ		
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑ(ԵՐ)Ի ՀԵՏԱԶՈՏՈՒՄ.		
ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵՆՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ.		
Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ	ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ	Ե՞ՐԲ ՊԵՏՔ Է ԱՎԱՐՏՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ
ՄԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ.		
ՆԱԽԱԳԻԾՆ ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՍՈՎՈՐԱԾԸ/ԿԱՏԱՐԱԾԸ ՄՏԱԴԻՐ ԵՆՔ ՑՈՒՅՑ ՏԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ.		
Ի՞ՆՉ (ՄԻՋՈՑ)	ԻՆՉՊԵ՞Ս	Ո՞Վ ԵՎ ՈՐՏԵ՞Ղ

ԻՆՉ ՍՈՎՈՐԵՑ ԽՈՒՄԲԸ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ. ԱՇԱԿԵՐՏ. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ.

ՄԵՆՔ ՈՒՆԵԻՆՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.
ՄԵՆՔ ԿԱՏԱՐԵՑԻՆՔ.
ՄԵՐ ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼԵՐԸ ԿԼԻՆԵՆ.
ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ/ՀԱՐՑԸ/ՀՈԳՄՆ Է.
ԱՅՍ ՆԱԽԱԳԾԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԵՆՔ ՍՈՎՈՐԵՑԻՆՔ.

ՀԱՎԵԼՎԱԾ
14 (13)

ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՆԵՐԴՐՎԱԾ ԼՈՒՄԱՆ (ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ)

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ. ԱՇԱԿԵՐՏ. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ.

ԵՍ ԽՄԲԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻՆ ՕԺԱՆԴԱԿԵՑԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՐՊ.
ԱՅՍ ԽՄԲՈՒՄ ԻՆՁ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԻՑ ԴԺՎԱՐՆ Է.
ԴԱ ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՓՈԽԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՐՊ.
ՈՐՊԵՍԶԻ ԽՈՒՄԲՆ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՇԽԱՏԻ, ՊԵՏՔ Է ԱՆԵՄ.

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ ՆԱԽԱԳԾԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ. ԱՇԱԿԵՐՏ. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ, ՏԱՐԵԹԻՎ.

ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՍ ԼՈՒԾԵՑԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ.
ՍՐԱ ՀԵՏՎԱՆՔՈՎ ՍՈՎՈՐԵՑԻ ՀԵՏԵՎՅԱԼԸ ՆԱԽԱԳԾԻ/ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.
ԽՄԲՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ.
ԼՍԱՐԱՆԻ ԱՌՋԵՎ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ.
ԲԱՑԻ ՎԵՐՈՆՇՅԱԼԻՑ, ՍՈՎՈՐԵԼ ԵՄ.

ՀԱՅՏՆԱԲԵՐԵՑԻ, ՈՐ ԻՄ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

ՀԱՅՏՆԱԲԵՐԵՑԻ, ՈՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ Է ՏՐԱՄԱԴՐԵՄ.

ԻՆՉ ԿՓՈԽԵԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ.

ԲԱՆԱՎԵՃԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Կոնկրետ աշակերտին յուրաքանչյուր չափանիշի դեմ շնորհվում է համապատասխան միավոր, գումարվում են բոլոր չափանիշներից ստացած միավորները և բաժանվում վեցի (հաշվարկվում է նրանց միջին թվաբանականը):

ԼՍԵԼ	ՄԻՇՏ ԼՍՈՒՄ Է ԵՎ ՀԵՏԵՎՈՒՄ ԶԵԿՈՒՅՈՂԻՆ	ՀԱՃԱԽ ԼՍՈՒՄ Է ԵՎ ՆԱՅՈՒՄ ԶԵԿՈՒՅՈՂԻՆ	ՀԱԶՎԱԴԵՊ Է ԼՍՈՒՄ ԵՎ ՆԱՅՈՒՄ ԶԵԿՈՒՅՈՂԻՆ
ԽՈՍԵԼ	ՀՍՏԱԿ Է ԽՈՍՈՒՄ ԵՎ ՆԱՅՈՒՄ Է ՈՒՆԿՆԴՐԻՆ	ԽՈՍՔԸ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՀԱՍԿԱՆԱԼԻ Է, ՆԱՅՈՒՄ Է ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻՆ	ԽՈՍՔԸ ՀՍՏԱԿ ՉԷ, ՈՒԿՆԴԻՐՆԵՐԸ ԴԺՎԱՐԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՍԿԱՆԱԼ
ՈՉ ԲԱՌԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ԿԱՐՈՂ Է ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԸՆԿԱԼԵԼ ԵՎ ԿԻՐԱՌԵԼ ՈՉ ԲԱՌԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ (ԱՉՔՈՎ, ՁԵՌՆԱԾՈՒԹՅԱՄԲ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՁԱՅՆՈՎ)	ՀԱՃԱԽ ԿԱՐՈՂ Է ՀԱՍՏԱՏԵԼ ՈՉ ԲԱՌԱՅԻՆ ԿԱՊ	ՀԱԶՎԱԴԵՊ Է ԿԻՐԱՌՈՒՄ ՈՉ ԲԱՌԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ
ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ Է ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ԲԱՆԱՎԵՃԻ ԹԵՄԱՅԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՄԲ	ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ Է ՑՈՒՅԱԲԵՐՈՒՄ: ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՄԻՇՏ ՉԷ, ՈՐ ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋ ԵՆ	ԱՆՆՇԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ: ՉԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ ԿԱՄ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԱՊԵԼ ԻՐ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ԲԱՆԱՎԵՃԻ ԹԵՄԱՅԻՆ
ԿՈՂՊԵՐԱՅԻԱ	ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ Է ՀԱՄԱԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՏ, ՍՊԱՍՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ ՈՒՐԻՇՆԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏԵՆ ԻՐԵՆՑ ՄԻՏՔԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ԲԱՆԱՎԵՃԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ	ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ Է ՀԱՄԱԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՏ, ԵՐԲԵՄՆ ՄԻԱՆՈՒՄ Է ՈՒՐԻՇՆԵՐԻ ԽՈՍՔԻՆ, ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԳԻՏԻ ԲԱՆԱՎԵՃԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ	ՀԱԶՎԱԴԵՊ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԲԱՆԱՎԵՃԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՏԵՍԱԿԵՏԻ ՓԱՍՏԱՐԿՈՒՄ	ՏԵՍԱԿԵՏՆ ՕՐԻԳԻՆԱԼ Է ԵՎ ԱՄՐԱՊՆԴՎԱԾ ՓԱՍՏԵՐՈՎ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ԿԱ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ ՀԱՐՑԻ ՀԵՏ	ՏԵՍԱԿԵՏԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՆ ՎԻՃԵԼԻ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՏԵՍԱԿԵՏԸ ԶՈՒՐԿ Է ՀԱՐՑԻ ՀԵՏ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊԻՑ ԵՎ ՉԻ ԱՄՐԱՊՆԴՎԱԾ ՓԱՍՏԵՐՈՎ

ՀԱՎԵԼՎԱԾ 17

ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Այս դեպքում յուրաքանչյուր չափանիշից շնորհվում է զրո կամ մեկ միավոր և վերջնական միավորի հաշվարկման համար հաշվվում է դրանց գումարը: Առավելագույն գումարը տասը միավորն է:

	ԱՇԱԿԵՐՏԻ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ									
	1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.
ՀԵՏԱՔՐՔԻՐ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ)	1									
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ	1									
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ	1									
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎՃՌՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ	0									
ԹԵՄԱՅԻ ՀԱՍԿԱՆԱԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ (ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇՂԹԱ)	0									
ԶՐՈՒՅԵԼ (ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽՈՍՔ, ՏԵՄԲՐ)	1									
ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	0									
ԿԱՊ ԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ	1									
ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱԴԵԿՎԱՏ ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ)	1									
ԺԱՄԱՆԱԿԻ ԼԻՄԻՏԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ	0									
ԳՈՒՄԱՐԸ	6									

ՆԱԽԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿ

Առավելագույն գումարային միավորի երեքի բաժանումով տեղի է ունենում հավաքված միավորների տեղափոխում տասը միավորանոց գնահատման:

	ՏԱՐՐԱԿԱՆ 1 ՄԻԱՎՈՐ	ԸՆԴՈՒՆԵԼԻ 2 ՄԻԱՎՈՐ	ՎԱՐՊԵՏ 3 ՄԻԱՎՈՐ
1. ՆՊԱՏԱԿԸ	ԼԱՎ ՉԻ ԵՐԵՎՈՒՄ, ԱՂՈՏ Է	ՄԵԿ ՆՊԱՏԱԿԻ ՎՐԱ Է ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ	ԼԱՎ ԸՆԴԳԾՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐ, ՀԵՇՏ ԸՆԿԱԼԵԼԻ
2. ԿԱԶՄԱ-ԿԵՐՊՈՒՄԸ	ԹՈՒՅԼԿԱԶՄԱ-ԿԵՐՊՎԱԾ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՉԿԱ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇՂԹԱ, ԻՆՉԸ ՇՓՈԹԵՑ-ՆՈՒՄ Է ԸՆԹԵՐՑՈՂԻՆ/ՈՒՆԿՆԴՐԻՆ	ԳԻՏԱԿՑՎԱԾ Է ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՇԱՆՆԵՐՈՎ, ՈՐՈՇ ԱՆՑՈՒՄՆԵՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՐԶ ԵՆ, ՈՐՈՇ ԱՆՑՈՒՄՆԵՐ՝ ԱՆՀԱՄԿԱՆԱԼԻ	ԼԱՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՁԵՎԱՉԱՓ, ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՑՈՒՄ ՄԻ ԳԱՂԱՓԱՐԻՑ ՄՅՈՒՍԻՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է ՆԱԽԱԳԾԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
3. ԲՈՎԱՆԴԱ-ԿՈՒԹՅԱՆ ԿՈՌԵԿՏՈՒ-ԹՅՈՒՆԸ	ՀԱՃԱԽ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆՔ ԱՆՀԱՄԱՊԱ-ՏԱՍԽԱՆ, ՍԽԱԼ, ԸՆԹԵՐՑՈՂԻՆ/ՈՒՆԿՆԴՐԻՆ ՇՓՈԹԵՑՆՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԿՈՌԵԿՏ Է՝ ՈՐՈՇ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՄ ՍԽԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ	ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿՈՌԵԿՏ Է, ՓԱՍՏԵՐԸ՝ ՃՇԳՐԻՏ ԵՎ ՀՍՏԱԿ
4. ԼԵԶՎԱ-ԿԱՆ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐ-ՊՈՒՄԸ	ՀԱՃԱԽԱԿԻ ՍԽԱԼՆԵՐՈՎ, ԼԵԶՎԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊ	ԱՆՆՇԱՆ ՍԽԱԼՆԵՐՈՎ, ԼԵԶՎԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ	ԼԵԶՎԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ, ՊԱՀՊԱՆՎԱԾ ԵՆ ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ
5. ՀԵՏԱԶՈ-ՏՈՒՄԸ	ՀԵՏԱԶՈՏՈՒՄՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՉԻ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ, ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐԸ ՎՍՏԱՀԵԼԻ ՉԷ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ Է	ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ Է, ՍԱԿԱՅՆ ԽՄԲԻ ՆԵՐՈՒԺՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՉԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ Է	ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՃԻՇՏ Է ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ, ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՆ ԲԱԶՄԱԹԻՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, (ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԹԱՅԹԱԾ ՆՅՈՒԹԵՐ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԻՑ) ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՔԱՅԻՆ Է

6. ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐԸ	ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐԸ ՀԱՃԱԽ ՉԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ԿԱՄ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՉԵՆ ՍՏԵՂԾՎԱԾ	ԿԱ ԿԱՊ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ, ՍԱԿԱՅՆ ՄԻԱՊԱՂԱՂ Է, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԹԱՅԹԱԾ ԵՎ ԽՄԲԻ ՍՏԵՂԾԱԾ ՆՅՈՒԹԵՐ	ԲԱԶՄԵՐԱՆԳ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ, ԲԱՐԵԽԻՂՃ ԿԱՏԱՐՎԱԾ
7. ՍՏԵՂԾԱԳՈՐ-ԾԱԿԱՆՈՒԹ-ՅՈՒՆԸ	ԱՆՆՇԱՆ Է ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԾԱԽՍԸ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ	ԵՐԲԵՄՆ ԵՐԵՎՈՒՄ ԵՆ ԽՄԲԻ ՕՐԻԳԻՆԱԼ ՄՏՔԵՐԸ ԵՎ ՕԳՆՈՒՄ ՆԱԽԱԳԾԻ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆԸ	ԵՐԵՎՈՒՄ Է ԽՄԲԻ ՕՐԻԳԻՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՅՈՒՐՈՎԻ ՀԱՄՈԶՄՈՒՆՔԸ, ԻՆՉԸ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՎԵԼԻ ՀԵՏԱՔՐՔՐԻՐ Է ԴԱՐՁՆՈՒՄ
8.ՄԻՋԱՌԱՐ-ԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ	ՉԻ ԵՐԵՎՈՒՄ ԽՄԲԻ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՆ, ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆՔ ՓԱՍՏԻ ՈՉ ՃԻՇՏ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ	ԿԱ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ԿԱՊ ՄԵԿ ԿԱՄ ԵՐԿՈՒ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ ՍՏԱՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԵՏ	ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ԿԱՊՎՈՒՄ ԵՆ ՏԱՐԲԵՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ ՍՏԱՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԵՏ, ԻՆՉԸ ԽՈՍՈՒՄ Է ԽՄԲԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
9. ԵԶՐԱԿԱ-ՑՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ ՉԵՆ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԵՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՍԱԿԱՅՆ ՀՍՏԱԿ ՉԵՆ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՈՒՄ ԿԱ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ (ՕՐԻԳԻՆԱԼՈՒԹՅՈՒՆ), ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԵՏ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԵՆ ՀՍՏԱԿ
10. ՇՆՈՐՀԱՆ-ԴԵՍԸ	ՆԱԽԱԳԾԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԷՖԵԿՏԻՎ ՉԻ ՑՈՒՑԱԲԵՐՎԱԾ, ԴԺՎԱՐԱՆՈՒՄ Է ՄԻՏՔԸ ՁԵՎԱՎՈՐԵԼ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ, ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՉԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ	ՆԱԽԱԳԾԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՎԱՐ Է ՁԵՎԱՎՈՐՎԱԾ, ԿԻՐԱՌՈՒՄ Է ԴԻԴԱԿԻԿ ՆՅՈՒԹԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԻՆ	ՆԱԽԱԳԾԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ՀՍՏԱԿ Է ՁԵՎԱՎՈՐՎԱԾ, ԽՈՍՔԸ ՀՍՏԱԿ Է, ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԼՍԱՐԱՆԻՆ, ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԲԱՑՎԱԾ ԵՆ, ԿԻՐԱՌՈՒՄ Է ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԻՆ

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱԼԳՈՐԻԹՄ — Գործողությունների միասնականություն, որն ընթանում է խիստ կանոններով, որոնց հետևողական կատարումը հանգեցնում է խնդրի լուծման:

ԱՍՊԵԿՏ — Լատ. aspectus՝ տեսակետ, տեսակ: 1) Տեսակետ, որից ելնելով քննարկվում է առարկան, երևույթը, հասկացությունը: 2) Տվյալ երևույթի կողմերից մեկը կամ կապը:

ԲԵՆԵՖԻՑԻԱՐ — Անձ, որը ստանում է գույք, իրավունք կամ այլ տիպի օգուտ՝ ըստ սահմանված փաստաթղթի:

ԳԱԲՈՆ — Այսօր ինքնուրույն պետություն Աֆրիկայում:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — Քաղաքացիների իրավունքների ոտնահարում նրանց սեռի դրդապատճառով:

ԷԼԶԱՍ — Տարածաշրջան Հարավ-Արևելյան Ֆրանսիայում: 1871-1918 թվականներին այն պատկանել է Գերմանիային:

ԹԵՈԼՈԳԻԱ — Աստվածաբանություն՝ կրոնական վարդապետությունների և ուսմունքների միասնականություն:

ԻՆԴԻԿԱՏՈՐ — Լատ. indicator՝ ստուգիչ. ցուցանիշ:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ — Հասարակական կառավարման այնպիսի ձև, որի ժամանակ որոշակի տարածքի բնակիչներ ստեղծում են համայնք, որը ճանաչում և իրավաբանական կարգավիճակ է շնորհում կենտրոնական իշխանությանը:

ԼԻՑԵՆՑԻԱՆՏ — 1) Առաջին գիտական աստիճանը Արևմտյան Եվրոպայի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում, շնորհում են բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու 3-րդ կամ 4-րդ տարում: Միջնակարգ ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնը համատեղելու իրավունք է տալիս: 2) Բակալավրի և մագիստրոսի աստիճանների միջև գիտական աստիճան որոշ համալսարաններում:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ — Կանխարգելող բնույթի, խուսափելու, պաշտպանական: Կանխարգելում՝ պրևենցիա (լատ. praevencio) – նախօրոք միջոցների ձեռնարկում որևէ բանից խուսափելու նպատակով:

ԿՈՊՐՈՄԻՍ — Լատ. compromissum՝ փոխզիջում. փոխզիջման ճանապարհով ձեռք բերված համաձայնություն:

ՀԱՐՑՎՈՂ	Անձ, որը պատասխանում է հարցարանի կամ հարցազրույցի ժամանակ առաջադրված հարցերին և հանդիսանում է բանավոր կամ գրավոր տեղեկության աղբյուր:
ՄԻՍԻՈՆԵՐ	Ֆր. missionaire՝ քարոզիչ. կրոնական քարոզչություն վարելու և այլ դավանանքների մարդկանց դարձի բերելու համար քրիստոնեական եկեղեցու կողմից առաքված անձ:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. «Կոմպասիտո» – դասագիրք մարդու իրավունքների բնագավառից երեխաների համար: Եվրոպայի խորհրդի բյուրո Վրաստանում: 2009
2. Վրաստանի Խորհրդարանի Ազգային գրադարան: Կայք-էջ՝ http://www.nplg.gov.ge/
3. Վրաստանի քաղաքացիական հասարակության թվայնացված գրադարանի հավաքածու և քաղաքացիական կթության թվայնացված գրադարան
4. www.fpp.org.pl
5. www.freethechildren.com
6. www.pbl_online.org

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

1. Բրանդեր Պ., Օլիվյերա Բ., Գոմես Ռ., Օնդրաչկովա Ի., Ցին Է., Սուրյան Ա., Լեմիներ Մ-Լ., Սուսլովա Ա., Կոմպաս, Դասագիրք մարդու իրավունքների կրթության բնագավառում երիտասարդների մասնակցությամբ: Counsil of Europe, տպագրված է Վրաստանում, 2004
2. Բացատրական բառարան կրթության մասնագետների համար: Թբիլիսի, 2007
3. Գվարամաձե Ն., Խուրոշվիլի Ա.: Միջազգային մարդասիրական իրավունքի հիմունքների ուսուցումը Վրաստանի դպրոցներում: ճշնչ, Թբիլիսի, 2005
4. էջ 37, էջ 39 Լոգո, © Free the Children (կազմակերպության մատուցված լուսանկարները)
5. Դիմեկ Ռաֆալ, Եվրոպական ակումբը դպրոցում, ինչի՞ համար, ինչպե՞ս, ինչո՞ւ: Ուսուցիչների և աշակերտների դասագիրք: Վարշավա, 2010
6. Էրեմաշվիլի Ն., Փերաձե Մ.,Մակալաթիա Է., Գախելաձե Գ., Իրավական կուլտուրա: PH International, Թբիլիսի, 2009
7. Ազգային ուսումնական պլան 2011-2016 (նախագիծ)
8. Վաժա-Փշավելա, Աշխարհաքաղաքացիությունը և հայրենասիրությունը, 1905
9. Վեբստեր Ք., Վերանայի՛ր, հրաժարվի՛ր, նվազեցրո՛ւ ..., REC Caucasus, Թբիլիսի, 2007
10. Հրահանգներ դպրոցի աշակերտների ինքնակառավարման ընտրությունների համար: Թբիլիսի, 2010
11. Օրենք տեղական ինքնակառավարման մասին
12. Վրաստանի օրենք Ընդհանուր կրթության մասին
13. Հանրային դպրոցների կանոնադրությունը
14. Օտար բառերի բառարան (կազմող՝ Մ.Ճաբաշվիլի), «Գանաթլեբա»,
15. Թբիլիսի, 1973
16. Օտար բառերի բառարան (կազմող՝ Ս.Թեզելիշվիլի), Թբիլիսի, 2005
17. Մենք, ժողովուրդը ... նախագիծ – քաղաքացի, CIVITAS International, Tbilisi, 2002
18. Носик Б. Альберт Швейцер. Белый Доктор из Джунглей. ЖЗЛ, Москва, 1973
19. Bundesarchiv, Bild 183-D0116-0041-019 / Unknown / CC-BY-SA
20. http://ka.wikipedia.org/wiki/vaJa-fSavela
21. http://ru.wikipedia.org/wiki/Жубер_Петрус_Якобус
22. http://ru.wikipedia.org/wiki/Файл:L.N.Tolstoy_Prokudin-Gorsky.jpg
23. http://ru.wikipedia.org/wiki/Файл:Kafka_portrait.jpg
24. http://www.enfantsentraide.org/quinoussommes/histoire